# ԾՐԱԳՐԵՐ
ՅԵՎ
# ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻՈՆ ՆՈՐՄԱՆԵՐ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ




623
Ծ-98

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1940

623
Ծ-98
04 AUG 2010

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԽՍՀՄ յեվ ՌՍՖՍՀ Օսոավիաքիմի կենտ. խորհրդի նախագահ
դիվկոմ ԳՈՐՇԿՈՎ.

*21 փետրվարի 1939 թ.*

# ԾՐԱԳՐԵՐ ՅԵՎ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻՈՆ ՆՈՐՄԱՆԵՐ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ

ՅԵՐԵՎԱՆ — ՀԱՅՊԵՏՀՐԱՏ — 1940

16 MAY 2013

13124

Պաշավիաքիմի քաղաքային յեվ շրջանային խորհուրդների նախագահներին

1. Գործադրության մեջ մտցնել 1939 թվի հրաձգային սպորտի ծրագրերը և կլասիֆիկացիոն նորմաները:

2. ԽՍՀՄ Պաշավիաքիմի կենտխորհրդի սպորտ-հրաձգային ակումբի 1938 թվին հրատարակած ծրագրերը վերացնել:

3. Սպորտ-հրաձգային նորմատիվների պատրաստության և հրաձգարաններում անվտանգությունն ապահովելու գործում անշեղորեն ղեկավարվել սույն ծրագրերով:

4. Բոլոր տեսակի տիրեր և հրաձգարաններ ընտրելու, կարգապահությունը հսկելու և հրապաշարն իր նշանակությանը ծախսելու ու հաշվառման ճիշտ տանելու գործին անձնապես պատասխանատու յեն Պաշավիաքիմի քաղաքային և շրջանային խորհուրդների նախագահները:

Հայկական Պաշավիաքիմի կենտխորհրդի նախագահ
կապիտան ՄԻՐԶԱՅԱՆ

21 դեկտեմբերի 1939 թ.
Յերևան

1991
40

ПРОГРАММЫ
и классификационные нормы по стрелковому спорту
Гиз Арм. ССР, Ереван, ул. Ленина, 65

## ՀԱՏՎԱԾ I

# ՀՐԱՑԱՆՆԵՐՈՎ, ԱՏՐՃԱՆԱԿՈՎ (ՊԻՍՏՈԼԵՏՈՎ) ՅԵՎ ԳՆԴԱՑԻՐՆԵՐՈՎ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻՈՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

### Ներածական դիտողություններ

Հրաձգային սպորտը, հանդիսանալով մասսայական պաշտպանական աշխատանքի հիմնական տեսակներից մեկը, նպատակ ունի պատրաստել Լենինի—Ստալինի կուսակցության գործին նվիրված դիպուկ հրաձիգներ, սոցիալիստական հայրենիքի կայուն պաշտպաններ:

Կլասիֆիկացիոն նորմաներն ապահովում են հրաձիգների պատրաստության բարձր որակը, սպորտ-հրաձգային աշխատանքի անցկացման միասնականությունը և հրաձգային կադրերի պատրաստման ու գնահատման միատեսակությունը:

Այդ նորմաների կատարումը զենքի յուրաքանչյուր տեսակի վերաբերմամբ պարտադիր է բոլոր կազմակերպությունների և սպորտային ընկերությունների համար, նրանց կողմից սպորտ-հրաձգային աշխատանքի անցկացման ժամանակ: Կլասիֆիկացիոն նորմաները հանդիսանում են սպորտ-հրաձգային պատրաստության անցած ետապի քննություն, ստուգում:

Կլասիֆիկացիոն նորմաների կատարման համապատասխան սահմանվում են հրաձիգների հետևյալ կոչումները.

1. Վորոշիլովյան պատանի հրաձիգ:
2. Վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգ:
3. Հրաձիգ ատրճանակով (պիստոլետով):
4. Վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգ:
5. Վորոշիլովյան գնդացրորդ (հաստոցավոր կամ ձեռքի գնդացրով):

6. Սնայպեր։

7. Հրաձիգ-վարպետ։

**Ծանոթություն։** Այն շրջանների և քաղաքների համար, վորտեղ հնարավորություն չկա ՎՀ 2-րդ աստիճանի պատրաստելու, մտցվում է փոքր տրամաչափի հրացանով I դասի հրաձգի լրացուցիչ կլասիֆիկացիան։

Ծրագրի բոլոր կոմպլեքսների համաձայն, յուրաքանչյուր նորմայի կատարման հետ միասին, հրաձգի անձնական հրաձգային գրքույկում համապատասխան նշում է արվում, մտցնելով ամիսն ու ամսաթիվը և ցույց տված հետևանքը (տես ստուգումներն անցկացնելու հրահանգը)։




Հրաձգության կլասիֆիկացիաների սխեման



Այն հրաձիգներին, վորոնք կատարել են հրաձգության նորմաները և թեորիայի ու նյութական մասի քննություն են տվել, իրավունք է վերապահվում համապատասխան հրաձգային կրծքանշաններ կրելու։ Հրաձգային կրծքանշաններ կրելը թույլատրվում է ամեն որ, ըստվորում զենքի յուրաքանչյուր տեսակի նկատմամբ կարելի յե կրել միմիայն մեկ (ավագ) կրծքանշան։

Նայած վերջին կատարած նորմայի կլասիֆիկացիային, հրաձգին թույլատրվում է մասնակցել զենքի իր տեսակի հրաձգային մրցակցություններին։

## 1. ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՊԱՏԱՆԻ ՀՐԱՁԻԳ

Նորմաների կատարումը թույլ է տրվում պիոներներին և դպրոցականներին, 13-ից մինչև 16 տարեկան հասակում, վորոնք անցել են հրաձգային նախնական պատրաստությունը։

**Զենքը**—փոքր տրամաչափի ТОЗ-8, ТОЗ-9 հրացան, նշանոցը բաց, փամփուշտները՝ հայրենի արտադրության։

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ։

**Թիրախը**—№ 6։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ է տրվում)։

**Փամփուշտների քանակը**—3 փորձնական և 5 քննական։

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ։

**Կատարման նորման**—40 աչկո։

### ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ։

**Թիրախը**—№ 9a (կրծքաչափ՝ շրջաններով, 10 անգամ փոքրացրած)։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկը կիրառելը թույլ է տրվում)։

**Փամփուշտների քանակը**—3։

**Ժամանակը հրաձգության համար**—3 րոպե։

**Կատարման նորման**—3 դիպում ֆիգուրին։

## 2. ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ I ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԻԳ

*Նորմաների կատարումը թույլ է տրվում բոլոր այն անձանց, վորոնք անց են կացել նախնական հրաձգային պատրաստությունը (կատարել են պատրաստության ծրագրով նախատեսնված նախապատրաստական վարժությունները):*

**Զենքը**—*փոքր տրամաչափի* ТОЗ-8, ТОЗ-9 *հրացան, նշանոցը բաց:*

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռակայությունը**—*50 մ:*

**Թիրախը**—*№ 7:*

**Դիրքը հրաձգության համար**—*պառկած՝ ձեռքից (հրացանի փոկը կիրառելը թույլ է տրվում):*

**Փամփուշտների քանակը**—*3 փորձնական և 5 քննական:*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ:*

**Կատարման նորման**—*40 աչկո:*

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռակայությունը**—*50 մ:*

**Թիրախը**—*№ 9a (կրծքաչափ՝ շրջաններով, 5 անգամ փոքրացրած):*

**Դիրքը հրաձգության համար**—*պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ է տրվում):*

**Փամփուշտների քանակը**—*3 փորձնական և 5 քննական:*

**Ժամանակը հրաձգության համար**—ТОЗ-8 *հրացանով—1,5 րոպե,* ТОЗ-9 *հրացանով (պահեստարանի կիրառումով)—1 րոպե:*

**Կատարման նորման**—*5 դիպում ֆիգուրին:*

**Կատարման կարգը**—*հրաձիգը պատրաստվում է պառկած հրաձգության համար, զենքը լցրած չէ (*ТОЗ-9 *պահեստարանը լցրած ու դրված է իր բնի մեջ), փակաղակը փակած է, կոթն իջեցված է գետնին. «կրակ» հրամանով կամ ազդանշանով հրաձիգը լցնում է հրացանը և հաջորդաբար հինգ ձիգ է կատարում:*

**Ծանոթություններ:** *1. Նորման կատարելու ժամանակ հրաձգությունը ճշտել ոգնականի կամ գործիքների միջոցով չի թույլատրվում: Փորձնական ձիգերի հետևանքները զննելու համար հրաձիգներին թիրախների մոտ են տանում:*

*2. Վորպես բացառություն, այն կազմակերպությունների համար, վորոնք 50 մ հեռակայությամբ տիրեր չունեն, Պաշտպանական ժողովրդական կոմիսարիատի ... -ի հանրապետական, մարզային խորհուրդների թույլտվությամբ, նորմաների ընդունումը թույլ է տրվում 25 մ հեռակայությամբ, վարժության մեջ մտցնելով հետևյալ փոփոխությունները. առաջին վարժության համար—թիրախ № 6, կատարման նորման—42 աչկո. յերկրորդ վարժության համար—թիրախ № 9a (կրծքաչափ՝ շրջաններով, 10 անգամ փոքրացրած), կատարման նորման—հինգ դիպում:*

## 3. I ԴԱՍԻ ՀՐԱՁԻԳ

*Նորմաների կատարումը թույլ է տրվում վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգներին:*

**Զենքը**—*փոքր տրամաչափի* ТОЗ-8 *և* ТОЗ-9 *հրացան, նշանոցն ամեն տեսակի, բացի ոպտիկականից, փամփուշտները՝ հայրենի արտադրության:*

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռակայությունը**—*50 մ:*

**Թիրախը**—*№ 7:*

**Դիրքը հրաձգության համար**—*պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ է տրվում),*

**Փամփուշտների քանակը**—*3 փորձնական, 10 քննական՝ 5-ական հատ յուրաքանչյուր թիրախին:*

**Ժամանակը հրաձգության համար**—*10 րոպե:*

**Կատարման նորման**—*92 աչկո:*

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռակայությունը**—*50 մ:*

**Թիրախը**—*№ 7:*

**Դիրքը հրաձգության համար**—*կանգնած և ծնկից:*

**Փամփուշտների քանակը**—5 փորձնական, 10 քննական՝ 5-ական փամփուշտ յուրաքանչյուր դրությունից թիրախին։

**Ժամանակը հրաձգության համար**—10 րոպե 5 ձիգից բաղկացած յուրաքանչյուր քննական սերիայի համար։

Կատարման նորման—կանգնած դրությունից 35, ծնկած դրությունից—40 աչկո։

## 4. ՀՐԱՁԻԳ ԱՏՐՃԱՆԱԿՈՎ ԿԱՄ ՊԻՍՏՈԼԵՏՈՎ

Նորմաների կատարումը թույլ է տրվում վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգներին, վորոնք անցել են նախնական պատրաստությունն ատրճանակով (պիստոլետով) հրաձգի ծրագրով։

**Զենքը**—ամեն տեսակի տրամաչափի ատրճանակ (պիստոլետ), նշանոցը բաց, փամփուշտն ամեն տեսակի մարկայի։

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ։

**Թիրախը**—№ 5 կամ 4։

**Դրությունը հրաձգության ժամանակ**—կանգնած, ազատ մեկնած ձեռքով։

**Փամփուշտների քանակը**—3 փորձնական և 5 քննական։

**Ժամանակը հրաձգության համար**—10 րոպե 5 ձիգից բաղկացած սերիայի համար։

**Կատարման նորման**—35 աչկո։

### ՑԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ։

**Թիրախը**—№ 5 կամ 4։

**Դրությունը հրաձգության համար**—կանգնած, ազատ պարզած ձեռքով,

**Փամփուշտների քանակը**—5 (առանց փորձնականների)։

**Ժամանակը հրաձգության համար**—ատրճանակի համար—30 վայրկյան, ավտոպիստոլետի համար—20 վայրկյան։

**Կատարման նորման**—30 աչկո։

**Կատարման կարգը**—մինչև «կրակ» հրամանը հրաձիգը պահում է լցրած զենքը կիսածալած ձեռքում, վորն ուղղվում է



դեպի թիրախի կողմը և դեպի վեր. «կրակ» հրամանով (ազդանշանով) բարձրացնում է հրահանը և կրակ է բաց անում։

Միալիցք պիստոլետով հրաձգություն կատարելիս, ժամանակը յուրաքանչյուր ձիգի համար—6 վայրկյան, վերալցման համար ընդհատումներով, առանց տեղից շարժվելու—15 վայրկյան։

## 5. ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԻԳ

Նորմաները կատարվում են տիրում կամ հրաձգարանում։ Նորմաների կատարումը թույլ է տրվում այն անձանց, վորոնք հանձնել են վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձգի նորման, անց են կացել նախնական պատրաստությունը ՎՀ 2-րդ աստիճանի ծրագրով և կատարել են նախապատրաստական վարժությունները։

**Զենքը**—1891/1930 թ. տիպարի հրացան, առանց կոնստրուկտիվ (կառուցվածքային) փոփոխությունների, նշանոցային հարմարանքները՝ սահմանված տիպարի, նշանոցը բաց, ձգանի լարումը (ուժը) 2 կգ-ից վոչ պակաս։

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—300 մ։

**Թիրախը**—№ 9a (կրծքաչափ՝ շրջաններով)։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ է տրվում)։

**Փամփուշտների քանակը**—3 փորձնական և 5 քննական։

**Ժամանակը հրաձգության համար**— անսահմանափակ։

**Կատարման նորման**—35 աչկո, 4 գնդակ դուրս չթողնել ֆիգուրից։

### ՑԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—300 մ։

**Թիրախը**—№ 12 (կրծքաչափ, շրջակտրած) վայրի ֆոնի վրա։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած (հրացանի փոկի և հենարանի կիրառումը թույլ է տրվում)։

**Փամփուշտների քանակը**—3։

**Ժամանակը հրաձգության համար**—*որոշվում է նպատակի երևացումով։*

**Կատարման նորման**—*երկու դիպում։*

**Կատարման կարգը**—*հրաձիգը պատրաստվում է պառկած հրաձգության համար, հրացանը լցրած է։ Թիրախի երևալուն պես «կրակ» է բաց անում։ Թիրախը երևան է գալիս երեք անգամ մեկ տեղում 7 վայրկյան ժամանակով, 10—15 վայրկյան ընդմիջումներով։*

## ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

*(կատարվում է հակագազը հագած)*

**Հեռավորությունը**—*300 մ։*

**Թիրախը**—*№ 12 (կրծքաչափ, շրջակտրած) վայրի ֆոնի վրա։*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած (հրացանի փոկի և հենարանի կիրառումը թույլ է տրվում)։*

**Փամփուշտների քանակը**—*3 քննական (առանց փորձնականների)։*

**Ժամանակը հրաձգության համար**—*45 վայրկյան 3 փամփուշտի համար։*

**Կատարման նորման**—*երկու դիպում։*

**Կատարման կարգը**—*հրաձիգը հագնում է հակագազը և պատրաստվում է հրաձգության համար, հրացանը լցրած է, կոթն իջեցված է գետնին։ Հակագազը՝ սահմանված տիպարի, առանց որևէ փոփոխության և լրացման․ հրաձգությունից առաջ հակագազի ապակիները օրբելն ու յուղելը թույլ է տրվում։*

## 6. ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ԳՆԴԱՑՐՈՐԴ

### **Ձեռքի գնդացիր**

*Նորմաների կատարումը թույլ է տրվում այն հրաձիգներին, վորոնք առնվազն 1-ին աստիճանի ՎՀ կոչում ունեն հրացանով և անցել են նախնական պատրաստությունը գնդացրային խմբակներում, կոմանդաներում։ Վարժությունների կատարումը տեղի յէ ունենում հրաձգարանում։*

**Զենքը**—*ДП ձեռքի գնդացիր (Դեգտյարևի—հետևակային), նշանոցը բաց։*



**Հեռավորությունը**—*300 մ։*

**Նպատակները**—*2․ թիրախ № 14 (վազեվազք) և № 19 (ձեռքի գնդացիր), վորոնք դասավորված են ճակատի գծով 5—10 մ միջանցով։*

**Փամփուշտները**—*6 (երկու հերթով)։*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած։*

**Ժամանակը կրակի պատրաստվելու համար**—*1 րոպե, հրաձգության համար—1 րոպե։*

**Կատարման նորման**—*հարվածել երկու թիրախներն էլ չորս գնդակով։*

**Կատարման կարգը** — *հրահանգչի հրամանով գնդացրորդը հասնում է գնդացիրը դիրքում։ Գնդացրի հասնման համար— 1 րոպե։ Հրահանգչի հրամանով գնդացրորդը լցնում է գնդացիրը, հաստում է մատնանշված նշանոցը և գնդակոծում է նպատակը երկու հերթով։ Ժամանակը հրաձգության համար հաշվվում է հրահանգչի հրամանի սկզբից։*

## ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑԻՐ

*Նորմաների կատարումը թույլ է տրվում՝ վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգներին (հրացանով), վորոնք անցել են նախնական պատրաստությունը գնդացրային խմբակներում, կոմանդաներում։ Վարժությունների կատարումը տեղի յէ ունենում հրաձգարանում։*

**Զենքը**—*հաստոցավոր գնդացիր, նշանոցը բաց։*

## ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—*300 մ։*

**Թիրախը**—*№ 19 (ձեռքի գնդացիր)։*

**Փամփուշտների քանակը**—*6։*

**Ժամանակը հրաձգության համար**—*1 րոպե լցնելու հետ միասին։*

**Կատարման նորման**—*հարվածել թիրախը չորս գնդակով։*

**Կատարման կարգը**—*վարժության ղեկավարի հրամանի համաձայն լցնում է գնդացիրը, հաստում է նշանոցը և ուղղանը և ինքնուրույն կերպով գնդակոծում է նպատակը մեկ հերթով։*

## ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—200 մ։

**Նպատակը**—ութ թիրախ №14, 8 մ ճակատով դասավորված։

**Փամփուշտների քանակը**—15 (մեկ հերթով)։

**Ժամանակը հրաձգության համար**—մեկ րոպե (լցնելու և նշանոցը հատելու հետ միասին)։

**Կատարման նորման**—հարվածել 5 ֆիգուր։

**Կատարման կարգը**—վարժություն հանձնողը հրամանի համաձայն ինքնուրույն կերպով գնդակոծում ե նպատակը, գընդակները հավասարաչափ ցրելով նպատակի ամբողջ լայնությամբ։

**Ծանոթություն։** Վորոշիլովյան գնդացրորդի կոչումը տրվում ե մեկը՝ ձեռքի կամ հաստոցավոր գնդացրով նորմաները կատարելուց հետո, բաժանելով՝ վորոշիլովյան գնդացրորդի ձեռքի գնդացրով և վորոշիլովյան գնդացրորդի հաստոցավոր գնդացրով։

## 7. ՍՆԱՅՊԵՐ

Նորմաների կատարումը թույլ ե տրվում այն անձնավորություններին, վորոնք կատարել են վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձգի նորմաները և անցել են ուսուցումը հատուկ ծրագրով։

## 8. ՀՐԱՁԻԳ-ՎԱՐՊԵՏ

Նորմաների կատարումը թույլ ե տրվում սնայպերներին։

## ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Զենքը**—ТОЗ-8 փոքր տրամաչափի հրացան կամ նպատակային հրացան տարադիտական նշանոցով։

**Հեռավորությունը**—50 մ։

**Թիրախը**—№ 7։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ ե տրվում)։

**Փամփուշտների քանակը**—5 փորձնական և 10 քննական։

**Ժամանակը հրաձգության համար**—փորձնականների համար—10 րոպե, 5 ձիգից բաղկացած քննական սերիայի համար—10 րոպե։



**Կատարման նորման**—95 աչկո։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Զենքը**—7,62 մմ, 1891/1930 թ. տիպարի հրացան առանց կոնստրուկտիվ (կառուցվածքային) փոփոխությունների, նշանոցը բացը։

**Հեռավորությունը**—300 մ։

**Թիրախը**—№ 3։

**Դրությունը հրաձգության համար**—կանգնած, ծնկից և պառկած։ Մատնանշված հաջորդականությունը պարտադիր ե (հրացանի փոկի կիրառումը թույլ ե տրվում)։

**Փամփուշտների քանակը**—5 փորձնական (ցանկացած մեկ դրությունից) և 10 հատ յուրաքանչյուր դրության համար։

**Ժամանակը հրաձգության համար**—10 ձիգից բաղկացած քննական սերիայի համար—15 րոպե։

**Կատարման նորման**—235 աչկո (յերեք դրությունների հետևանքների գումարը), կանգնած դրությունից—70 աչկոյից վոչ պակաս։

## ՅԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Զենքը**—7,62 մմ, 1891/1930 թ. տիպարի հրացան, ամեն տեսակի նշանոցով՝ բաց, տարադիտական և ոպտիկական։

**Հեռավորությունը** 600 մ։

**Թիրախը** № 2։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլ ե տրվում)։

**Փամփուշտների քանակը**—5 փորձնական և 10 քննական։

**Ժամանակը հրաձգության համար**—10 րոպե 10 ձիգից բաղկացած սերիայի համար, փորձնականների համար—10 րոպե։

**Կատարման նորման**—45 աչկո։

## ՀԱՏՎԱԾ II

# ԾՐԱԳՐԵՐ ՎՈՂ, ՎՀ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ, ՎՀ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ, ՎԳ (ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑՐԻ), ՎԳ (ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐԻ), ԱՏՐՃԱՆԱԿՈՎ (ՊԻՍՏՈԼԵՏՈՎ) ՀՐԱՁԳԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

**Ներածական դիտողություններ**

### ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ

Հրաձգային սպորտի խնդիրն է՝ պատրաստել քաղաքականապես գրագետ հրաձիգներ, վորոնք օրինակելի կերպով տիրապետում են դիպուկ հրաձգության արվեստին, պատրաստ են կուսակցության և կառավարության կոչով զենքը ձեռքին իրենց սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու։

### ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Բոլոր կլասիֆիկացիաների հրաձիգների պատրաստումն անց է կացվում խմբակներում և կոմանդաներում՝ Պաջավիաքիմի սկզբնական, շրջանային կազմակերպություններին կից, վորոնք հաստատվում են Պաջավիաքիմի շրջխորհրդի կողմից։

**Վորոշիլովյան 1-ին աստիճանի** հրաձիգների պատրաստման խմբակները կոմպլեկտավորվում են առաջին հերթին Պաջավիաքիմի անդամներից։

Ավելի բարձր կլասիֆիկացիաների հրաձիգների պատրաստման խմբակները կոմպլեկտավորվում են Պաջավիաքիմի անդամների ստորադաս կլասիֆիկացիաների հրաձիգներից։ Խմբակի անդամների քանակը պետք է լինի 10—15 մարդուց վոչ ավելի։

Հրահանգչին օգնելու համար հաշվառման և առօրյա աշխատանքն անցկացնելու համար խմբակի ընդհանուր ժողովն իր կազմից ավագ է ընտրում։ Հրահանգիչն ամիսը մեկ անգամից վոչ պակաս հաշիվ է տալիս իր աշխատանքի մասին խմբակի և Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի առաջ։



Հրաձգության ուսուցումն անց է կացվում առանց արտադրությունից կտրվելու, նախապես կազմած պլաններով և դասացուցակներով։ Յուրաքանչյուր պարապմունքի տևողությունն է յերկուսից մինչև չորս ժամ, դպրոցականների համար յերկու ժամից վոչ ավելի։

Խմբակի ուսումնական պարապմունքները ղեկավարում է հաստիքային կամ հասարակական կարգով աշխատող հրահանգիչը, վորն ընտրվում է տվյալ ձեռնարկության պատրաստված ընկերներից և հաստատվում է Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպության խորհրդի կողմից։

Հրահանգչի պարտականությունների մեջ մտնում են.

1. Իրեն հանձնարարված խմբակի ուսուցումը։

2. Ուսումնական պլանների և պարապմունքների դասացուցակների կազմումը։

3. Ուսումնական ձեռնարկների և գույքի կանոնավոր խնամելու, պահելու և օգտագործելու ապահովումը։

4. Խմբակի հաճախելիության, առաջադիմության և սոցմրցակցության հաշվառումը։

Խմբակի աշխատանքի հաջողությունը կախված կլինի այն բանից, թե վորքան է կարողանում հրահանգիչը սովորողների մեջ առաջացնել ակտիվություն, հետաքրքրություն և ինքնագործունեություն, վորը ձեռք է բերվում պարապմունքների ճիշտ կազմակերպման և պարապմունքն անցկացնելու համար հրահանգչի իրեն անբասիր պատրաստման միջոցով։

Հրահանգիչը պետք է անցկացնի պարապմունքները հետևյալ հաջորդականությամբ.

1, Բացատրել ունկնդիրներին թեման և ուսումնական նպատակը։

2. Սոցմրցակցություն կազմակերպել տվյալ թեմայի կամ վարժության շուրջը։

3. Անձամբ ցույց տալ (պատմել) այն, ինչ վոր մշակվում է տվյալ պարապմունքի ժամանակ։

4. Ստուգել ցույց տվածի (պատմածի) յուրացումը։

5. Մարզանք կազմակերպել ցույց տվածի վերաբերյալ՝ խմբակը բաժանել մի քանի յենթախմբակների, յուրաքանչյուր յենթախմբակի համար ավագներ նշանակել ամենից լավ պատրաստված սովորողներից և նրանց ղեկավարությամբ անցկացնել մարզանքը. իսկ հրահանգիչն ինքը պարապում է ամենից

շատ յետ մնացողների հետ։ Հրաձգության ժամանակ նա անպայման գտնվում է կրակի գծի վրա։

Հրաձգային խմբակներում և կոմանդաներում քաղաքական պատրաստությունն ապահովելու համար, պետք է հիմնականում պարբերաբար անցկացնել քաղինֆորմացիաներ՝ կուսակցության և կառավարության վորոշումների, ընթացիկ քաղաքականության, միջազգային և ներքին դրության հարցերի շուրջը։

Քաղինֆորմացիաների և զրույցների բովանդակությունն ամեն անգամ պետք է համաձայնեցնել տեղական կուսակցական կազմակերպությունների հետ։

Քաղինֆորմացիաներն անցկացնելը դրվում է կոմանդայի կամ խմբակի ղեկավարի վրա, վորն ընտրվում և հաստատվում է տեղական կուսակցական կամ կոմյերիտական կազմակերպության կողմից։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Հրաձգությունն սկսելուց առաջ զենքը պետք է հասցված լինի նորմալ խփելու վիճակին, ստուգված հրահանգչական կազմի կողմից և հրաձիգին ամրացված լինի ուսուցման ամբողջ շրջանի ընթացքում։

Հրաձգության հերթական վարժությունը չկատարած սովորողներին պետք է խնամքով ստուգել ու պարզել չկատարելու պատճառները։

Հետևյալ վարժությանն անցնելը թույլ է տրվում միմիայն նախորդը կատարելուց հետո։

Հրաձգության հիմունքները և զենքի նյութական մասը պետք է դասավանդել այն հաջորդականությամբ, վորն ապահովում է նախապատրաստական հրաձգությունների վարժությունների կատարումը։

Ուսուցման անընդհատությունը վճռական նշանակություն ունի, ուստի հանձնարարվում է պարապմունքներն անցկացնել վեցօրյակում մեկ անգամից վոչ պակաս, լրացուցիչ մարզանք կատարելով վարժական փամփուշտներով տիրում։

Յետ մնացող հրաձիգների հետ պարապմունքներ անցկացնելու և ծրագրի վարժությունների լրացուցիչ մշակման համար հրահանգչին բաց է թողնվում փամփուշտների պաշար։



## 1. ԾՐԱԳԻՐ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՊԱՏԱՆԻ ՀՐԱՁԳԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

**Ժամերի հաշվարկը (մոտավոր)**

| | |
|---|---|
| Կ. Յե. Վորոշիլովի կենսագրությունը | 2 ժամ |
| Հրաձգության հիմունքները | 4 » |
| ТОЗ-8 կամ ТОЗ-9 հրացանի նյութական մասը | 4 ժամ |
| Հրաձգություն | 16 » |
| Ընդամենը | 26 ժամ |

### Հրաձգության հիմունքները

**Իմանալ։** Ինչպես է տեղի ունենում ձիգը. գնդակի շարժումը փողի մեջ և օդում. գնդակների ցրման պատճառները, վորոնք կախված են հրաձգից, զենքից և արտաքին պայմաններից. փոքր տրամաչափի գնդակների ծակողական գործողությունը։

**Կարողանալ։** Վորոշել յերեք, չորս և հինգ գնդակների դիպման միջին կետը։

### Հրացանի նյութական մասը

**Իմանալ։** ТОЗ-8 կամ 9 փոքրակալիբր հրացանի կառուցվածքը, վարվելու, պահելու և խնամելու կանոնները. փոքրակալիբր փամփուշտի կառուցվածքը։

**Կարողանալ։** Նախապատրաստել փոքրակալիբր հրացանը հրաձգության համար և մաքրել այն հրաձգությունից հետո։

### Նախապատրաստական հրաձգությունների վարժությունները

Հրաձգություն կատարելը թույլ է տրվում այն սովորողներին, վորոնք յուրացրել են անվտանգության կանոնները զենքի հետ վարվելու ժամանակ, կրակի պատրաստվելը պառկած հրաձգության համար, նշանառությունը, հրահանն իջեցնելը և շնչառության ռեժիմը։

**Զենքը**—ТОЗ-8 կամ 9 փոքրակալիբր հրացան։ Նշանոցը բաց։

**Դրությունը հրաձգության համար**—պառկած, փոկը կիրառելով։

### Անշարժ նշանակի վրա անսահմանափակ ժամանակի ընթացքում հրաձգություն կատարելու պրակտիկա

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ։

**Թիրախը**—№ 6։

**Փամփուշտների քանակը**—3

**Դրությունը հրաձգության համար**—պառկած, փոկը և հենարանը կիրառելով։

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ։

**Դիպումները ցույց տալը**—յուրաքանչյուր ձիգից հետո։

**Գնահատումը**—վոչ մի գնդակ դուրս չթողնել № 6 շրջանից։

**Կատարման կարգը**—հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության. ընդունած դրության և փակի օգտագործման կանոնավորությունն ստուգելուց հետո, հրահանգիչն ինքը լցնում է հրացանը, փոխեփոխ վարժական և մարտական փամփուշտներով այնպես, որ սովորողը չիմանա, թե յերբ նրա մոտ ձիգ տեղի կունենա:

Յեթե առաջին գնդակով առաջադրությունը չի կատարվել (գնդակը դուրս է յեկել № 6 շրջանից), սովորողը յերկրորդ ձիգ չի կատարում: Հրահանգիչը հայտաբերում է սխալը և լրացուցիչ վարժություններով (առանց փամփուշտների, հրաձգային գործիքների, սպիտակ թերթի վրա կատարած հրաձգության միջոցով) վերացնում է այն:

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ:

**Թիրախը**—№ 6:

**Փամփուշտների քանակը**—5 (սերիաներով 2+3):

**Դրությունը հրաձգության համար**—պառկած, փոկը կիրառելով:

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ:

**Դիպումները ցույց տալը**—բոլոր ձիգերից հետո:

**Գնահատումը**—խփել առնվազն 24 աչկ (2 սերիայով):

**Կատարման կարգը**—հրահանգիչը ցույց է տալիս սովորողին տեղն ու թիրախը. հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և յերկու ձիգ է կատարում: Թիրախները զննելուց հետո հրահանգիչը նշում է հրաձգի սխալները, յեթե անհրաժեշտ է, ուղղում է դրանք և միմիայն դրանից հետո թույլ է տալիս յերկրորդ սերիայով հրաձգություն կատարելու:

**Անշարժ նպատակի վրա սահմանափակ ժամանակում հրաձգություն կատարելու պրակտիկա**

### ՅԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—25 մ:

**Թիրախը**—№ 9 (10 անգամ փոքրացրած):

**Փամփուշտների քանակը**—3:



**Դրությունը հրաձգության համար**—պառկած, հրացանի փոկը կիրառելով:

**Ժամանակը հրաձգության համար**—2 րոպե:

**Դիպումները ցույց տալը**—բոլոր ձիգերից հետո:

**Գնահատումը**—հարվածել ֆիգուրը 3 գնդակով:

**Կատարման կարգը**—հրահանգիչը ցույց է տալիս սովորողին տեղն ու թիրախը, հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության. հրացանը լցրած չէ, փականակը փակած է. ժամանակը հաշվվում է «կրակ» հրաման տալու մոմենտից:

**Փամփուշտների ծախսման հաշվարկը**

| | |
|---|---|
| 1-ին վարժություն | 6 հատ |
| 2-րդ » | 10 » |
| 3-րդ » | 3 » |
| Կլասիֆիկացիայի հանձնումը | 13 » |
| Հրահանգչի պահեստը (ռեզերվ) | 14 » |
| Ընդամենը | 46 հատ |

### ԶԵՌՆԱՐԿՆԵՐ


Глазатов и Шпицгауз.—«Малокалиберная винтовка»—«Փոքրակալիբր հրացան»:

«Юный ворошиловский стрелок»—«Վորոշիլովյան պատանի հրաձիգ».—ՍՍՀՄ Պաշավիաքիմի ԿԽ հրատարակչություն:

Занегин.—«Спутник пионера и школьника»—«Պիոների և դպրոցականի ուղեցույց»:

Занегин.—«Пневматическая винтовка»—«Պնևմատիկ հրացան»:

Пономарев.—«Прикладная баллистика для стрелка»—«Կիրառական ձգաբանություն հրաձգի համար»:


## 2. ԾՐԱԳԻՐ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԳԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

**Ժամերի հաշվարկը (մոտավոր)**

| | |
|---|---|
| Կրակային պատրաստություն[1] | 22 ժամ |
| Հրաձգության հիմունքները | 4 » |
| Զենքի նյութական մասը | 8 » |
| Ընդամենը | 34 ժամ |

[1]) Այս հատվածի մեջ բոլոր ծրագրերում մտնում են հրաձգության տեխնիկան, նախապատրաստական վարժությունների մշակումը և նորմաների հանձնումը:

## Հրաձգության հիմունքները

Իմանալ։ Ձիգի առաջացումը, ինչ է գնդակի սկզբնական արագությունը, հետադծի գոյացումը, նշանոցի նշանակումը. նշանառության գիծ, նշանակետ, բարձրացման գիծ, նշանառության անկյուն. գնդակների ցրման պատճառները. փոքրակալիբր գնդակի ծակողական գործողության, թռիչքի հեռավորության և ծակունակության մասին։

Կարողանալ։ Ինքնուրույն կերպով վորոշել դիպման միջին կետը 3—5 և ավելի ծակատների միջոցով. ուղղումներ մտցնել նշանոցի հաստման մեջ՝ դիպման միջին կետը նպատակի կենտրոնի հետ համատեղելու համար՝ 50 մ սահմաններում հրաձգության ժամանակ, նայած արտաքին պայմաններին (քամի, լուսավորություն, օդի ջերմաստիճան)։

## Զենքի նյութական մասը

Իմանալ։ ТОЗ-8 և 9 փոքրակալիբր հրացանի կառուցվածքը և հատկությունները. հրացանի մասերի աշխատանքը լցնելու, լցահանելու և ձիգ կատարելու ժամանակ։ Փոքրակալիբր փամփուշտի կառուցվածքը։ Ընդհանուր տեղեկություններ 1891/1930 թ. տիպարի հրացանի կառուցվածքի և մարտական հատկության մասին. հակագազի կառուցվածքը։

Կարողանալ։ Սարքին պահել փոքրակալիբր հրացանը. զննել այն հրաձգությունից առաջ և հրաձգությունից հետո, նորմալ խփելուն հասցնել. նախապատրաստել հրաձգության համար և մաքրել. վերացնել խափանումները լցնելու, լցահանելու և հրաձգության ժամանակ օգտվել հակագազով։

## Նախապատրաստական հրաձգությունների վարժությունները

Հրաձգությունը թույլ է տրվում այն սովորողներին, վորոնք յուրացրել են անվտանգության կանոնները՝ զենքի հետ վարվելու ժամանակ, պառկած հրաձգության համար պատրաստությունը, նշանառությունը, հրահանն իջեցնելը և շնչառության ռեժիմը։

Զենքը—ТОЗ-8 կամ 9 փոքրակալիբր հրացան։ Նշանոցը բաց։

Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկը կիրառելով։



## Անշարժ նպատակի վրա անսահմանափակ ժամանակում հրաձգություն կատարելու պրակտիկա

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հեռակայությունը—25 մ։

Թիրախը—№ 6։

Փամփուշտները—3։

Դիպումները ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո։

Գնահատումը—վոչ մի գնդակ դուրս չթողնել № 6 գաբարիտից։

Կատարման կարգը—հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության։ Ընդունված դրության և փոկի օգտագործման կանոնավորությունն ստուգելուց հետո հրահանգիչն ինքը լցնում է հրացանը փոխեփոխ վարժական և մարտական փամփուշտով այնպես, վոր սովորողը չիմանա, թե յերբ նրա մոտ ձիգ տեղի կունենա։ Յեթե առաջին գնդակով առաջադրությունը չի կատարվել (գնդակը դուրս է յեկել № 6 շրջանից), սովորողը յերկրորդ ձիգ չի կատարում։ Հրահանգիչը հայտաբերում է սխալը և հրաձգի մարզանքի միջոցով վերացնում է այն։ Դրանից հետո հրաձգին թույլ է տրվում վարժությունը կրկնելու։

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հեռակայությունը—50 մ։

Թիրախը—№ 7։

Փամփուշտները—5 (2 սերիա 2+3)։

Դիպումները ցույց տալը—յուրաքանչյուր սերիայից հետո։

Գնահատումը—դուրս չթողնել յերկրորդ սերիայի գնդակները № 6 գաբարիտից։

Կատարման կարգը—հրահանգիչը ցույց է տալիս սովորողին տեղն ու թիրախը. հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և յերկու ձիգ կատարում. Թիրախները զննելուց հետո հրահանգիչը նշում է հրաձիգի սխալները, յեթե անհրաժեշտ է, մարզանքի միջոցով ուղղում է դրանք և միմիայն դրանից հետո թույլ է տալիս յերկրորդ սերիայի հրաձգությունը կատարելու։

## ՅԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—*50 մ։*

**Թիրախը**—*№ 7։*

**Փամփուշտները**—*6 (2 սերիա 3+3)։*

**Դիպումները ցույց տալը**—*յուրաքանչյուր սերիայից հետո։*

**Գնահատումը**—*յերկրորդ սերիայով խփել 24 աչկո։*

**Կատարման կարգը**—*ինչպես յերկրորդ վարժության ժամանակ։*

*Վարժությունը կատարածներին թույլ է տրվում հանձնել 1-ին աստիճանի ՎՀ առաջին նորման։*

**Անշարժ նշանակի վրա սահմանափակ ժամանակում հակագազով հրաձգություն կատարելու պրակտիկա**

## ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հեռավորությունը**—*50 մ։*

**Թիրախը**—*№ 9ա (5 անգամ փոքրացրած) շրջաններով։*

**Փամփուշտները**—*3։*

**Ժամանակը հրաձգության համար** — ТОЗ-*8—50 վայրկյան,* ТОЗ-*9—35 վայրկ.։*

**Դիպումները ցույց տալը**—*բոլոր ձիգերից հետո։*

**Գնահատումը**—*հարվածել ֆիգուրը 3 գնդակով։*

**Կատարման կարգը**—*հրաձիգը պատրաստվում է պառկած հրաձգության, զենքը լցրած չէ (*ТОЗ-*9 պահեստարանը լցրած է յերեք փամփուշտով և դրված է իր բնի մեջ)․ փականակը փակած է․ «կրակ» հրամանով կամ ազդանշանով հրաձիգը լցնում է հրացանը և յերեք հաջորդական ձիգ է կատարում։*

*Այս վարժությունը մշակվում է հակագազը հագած*

**Փամփուշտների ծախսման հաշվարկը**

| | |
|---|---|
| *Վոչ նախապատրաստական հրաձգություններ* | *30 հատ* |
| *ՎՀ-1 նորմաների հանձնումը* | *16 »* |
| *Հրահանգչի պահեստը (ռեզերվ)* | *10 »* |
| *Ընդամենը* | *56 հատ* |

### ՁԵՌՆԱՐԿՆԵՐ


Пономарев.— Прикладная баллистика для стрелка, Военгиз 1937 г.—*Կիրառական ձգաբանություն հրաձգի համար։*

Филатов.—Краткие сведения об основаниях стрельбы из винтовки и пулемета. Военгиз.—*Համառոտ տեղեկություններ՝ հրացանով և գնդացիրով հրաձգությունների հիմունքների մասին։*

Глазатов и Шпицгауз — Малокалиберная винтовка ТОЗ-8 и 9, Военгиз.—ТОЗ-8 *և 9 փոքրակալիբր հրացան։*

Глазатов.—Боевая винтовка, Военгиз.—*Մարտական հրացան։*

Плакат—Противогаз БН «Будь готов к ПВХО»—пособие для подготовки к сдаче норм; Готов к ПВХО» 1-й ступени, Воениздат 1938—1939 г.г.—*Պլակատ* БН *հակագազ. «Յեղիր պատրաստ ՀՕՔՊ համար»—Ուսումնական պիտույք նորմաները հանձնելու պատրաստության համար. «Պատրաստ ՀՕՔՊ համար» 1-ին աստիճանի։*

«Огневая подготовка», Редиздат ЦС Осоавиахима СССР,—1938 г.—*«Կրակային պատրաստություն»։*

Карачевский.—Учись стрелять.—*Սովորիր կրակել։*




## 3. ԾՐԱԳԻՐ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԳԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

**Ժամերի հաշվարկը (մոտավոր)**

| | |
|---|---|
| *1891/1930 թ. տիպարի հրացանի նյութական մասը* | *6 ժամ* |
| *1914/1930 թ. տիպարի նռնակի նյութական մասը* | *2 »* |
| *Ձեռքի նռնակ նետելու տեխնիկան* | *6 »* |
| *Հրաձգության հիմունքները* | *6 »* |
| *Վայրի մարտական օգտագործումը* | *4 »* |
| *Հեռավորության վորոշումը* | *2 »* |
| *Սկզնամարտի ձևերը* | *8 »* |
| *Կրակային պատրաստություն* | *36 »* |
| *Շարային պատրաստություն* | *4 »* |
| *Ընդամենը* | *74 ժամ* |

**Շարային պատրաստություն**

**Իմանալ։** *Մարտիկի պարտականությունները շարքում շարվելուց առաջ։*

**Կարողանալ։** *Գործել շարքում, ջոկի կազմում զենքով և առանց զենքի։*

**Զենքի նյութական մասը (1891/1930 թ. տիպարի հրացան)**

**Իմանալ։** *Հրացանի մարտական հատկությունները և նրա կառուցվածքը․ ինչից և ինչպես է տեղի ունենում ձիգը․ հրացանի մասերի աշխատանքը․ հրաձգության խափանումներ առաջացնող պատճառները, հրացանը խնամելու և պահելու կանոնները մարտական և վարժական պարագայի զանազան պայմաններում․ սովորական, հրձիգ, հետքաթող և զրահահար գըն-*

գակներով փամփուշտների նշանակումը, կառուցվածքը և տարբերական հատկանիշները։

**Կարողանալ**։ *Հրացանը պահել մշտական մարտական պատրաստության վիճակում. քանդել և հավաքել հրացանը. զննել հրացանը հրաձգությունից առաջ և հետո. նախապատրաստել հրացանը (սրբել չորացնել փողանցքը) հրաձգության համար և մաքրել այն. վերացնել խափանումները հրաձգության ժամանակ. զննել և յուղել փամփուշտները հրաձգության համար և որոշել քանդելու և մաքրելու պատկանելիքների սարքինության աստիճանը. գազահանել հրացանը։*

### 1914/1930 թ. տիպարի ձեռքի նռնակը կամ 1938 թ. ձեռքի նռնակը (РГД—Դյակոնովի ձեռքի նռնակ)

**Իմանալ**։ *Ձեռքի նռնակի մարտական հատկությունները, նրա նշանակումը, գործողությունը և մարտական կիրառումը, նռնակի մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և դրանց գործողության մերժման պատճառները, նռնակի հետ վարվելու ժամանակ նախազգուշության միջոցները։*

**Կարողանալ**։ *Վարվել նռնակի և դետոնատորների (պայթեցուցիչ) հետ, նռնակը նախապատրաստել նետելու համար։*

### Նռնաձգության ձևերը

**Կարողանալ**։ *Նռնակները նետել հորիզոնական և ուղղաձիգ նպատակների վրա զանազան դրություններից, զենքով և առանց դրան, տեղից և շարժման ժամանակ. նռնակների կապոց պատրաստել և նետել այն տանկի վրա։*

### Հրաձգության հիմունքները

**Իմանալ**։ *Ինչից և տեղի ունենում ձիգը և ինչպես է թռչում գնդակն օդում, հետագծի բարձրությունը մինչև 600 մ հեռավորության վրա, գնդակների ցրման պատճառները և միջուկի մեծությունը մինչև 600 մ հեռավորության վրա։*

**Կարողանալ**։ *Հաշվի առնել հարվածելի և մեռյալ տարածությունը, օգտագործել ուղիղ ձիգը զանազան նպատակների վրա հրաձգություն կատարելու ժամանակ, նշանոցի հաստման ուղղումներ մտցնել և ընտրել նշանակետը, հաշվի առնելով յեղանակը և լուսավորությունը, վերացնել այն պատճառները, որոնք ազդում են հրաձգության դիպուկության վրա և կախում ունեն հրաձգից, զենքից և յեղանակից։*



### Սվինամարտ

**Իմանալ**։ *Սվինամարտի ձևերը։*

**Կարողանալ**։ *Նախապատրաստվել մարտի համար տեղում և շարժման ժամանակ, խոցել կարճ և հիմնական խոցով, հետ մղել հակառակորդի հարձակումը, հարվածներ հասցնել հրացանի կոթով։*

### Վայրի մարտական օգտագործումը

**Կարողանալ**։ *Տեղ ընտրել հրաձգության համար, քողարկվել վայրի վրա տեղավորվելու ժամանակ, ինքնախրամատավորվել, վազեվազքեր և սողումներ կատարել։*

### Հեռավորությունների որոշումը յեվ դիտողությունը

**Իմանալ**։ *Հեռավորություններն աչքաչափով և ձեռքի տակ յեղած առարկաների օգնությամբ որոշելու ձևերը։*

**Կարողանալ**։ *Հեռավորությունը որոշել աչքաչափով մինչև 10°/₀ ճշտությամբ 600 մ հեռավորության սահմաններում, օգտվելով նշանոցով, հատիկով, հրաձգային քանոնով և այլն, դիտել մարտադաշտը, նպատակի գնահատում և ընտրություն կատարել։*

### Նախապատրաստական հրաձգությունների վարժությունները

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** *է՝ անշարժ նպատակի վրա հրաձգության պրակտիկա տալ։*

**Նպատակը**—*թիրախ № 9 (գլխաչափ)։*

**Հեռավորությունը**—*100 մ։*

**Փամփուշտները**—*3։*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած՝ ձեռքից, փոկն օգտագործելով։*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ։*

**Դիպումները ցույց տալը**—*յուրաքանչյուր ձիգից հետո։*

**Գնահատումը**—*3 գնդակը դուրս չթողնել № 8 շրջանից։*

**Կատարման կարգը**—*հրահանգիչն ինքն է դնում փամփուշտները փամփշտանոցի մեջ, մարտական փամփուշտները հերթագայելով վարժական-կոնտրոլ փամփուշտների հետ։ Փամփուշտները պետք է մտցնել փամփշտանոցի մեջ հրաձգի համար*

աննկատելի կերպով, նախապես համոզվելով վարժական-կոնտրոլ փամփուշտների միջոցով, որ հրաձիգը ճիշտ է կատարում բոլոր գործողությունները դիպուկ ձիգ կատարելու համար։

## ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակն** է՝ անշարժ նպատակի վրա հրաձգության պրակտիկա տալ։

**Նպատակը**—№ 9 (կրծքաչափ)։

**Հեռավորությունը**—300 մ։

**Փամփուշտները**—3։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից, օգտագործելով փոկն ու հենարանը։

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ։

**Դիպումները ցույց տալը**—յուրաքանչյուր ձիգից հետո։

**Գնահատումը**—«գերազանց»—24, «լավ»—21։

**Կատարման կարգը**—սովորողը կրակում է նույնպես, ինչպես և առաջին վարժության ժամանակ, մարտական փամփուշտները հերթագայելով վարժական-կոնտրոլ փամփուշտների հետ։

## ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակն** է՝ երևացող նպատակի վրա հրաձգության պրակտիկա տալ։

**Զենքը**—ТОЗ-8 փոքրակալիբր հրացան։

**Նպատակը**—№ 12 (կրծքաչափ, 5 անգամ փոքրացրած) երևան է գալիս 5 անգամ վահանի ֆոնի վրա 7—10 վայրկյան ժամանակով, 10—15 վայրկյան ընդմիջումներով։

**Հեռավորությունը**—50 մ։

**Փամփուշտները**—5։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած, փոկը կիրառելով։

**Գնահատումը**—հարվածել ֆիգուրը չորս գնդակով։

**Կատարման կարգը**—հրահանգիչը ցույց է տալիս հրաձգին նպատակի. երևան գալու տեղը։ Հրահանգչի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության և լցնում է հրացանը։ Նպատակի երևան գալու դեպքում ինքնուրույն կերպով գնդակոծում է այն։



## ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակն** է՝ երևացող նպատակի վրա հրաձգության պրակտիկա տալ։

**Նպատակը**—№ 12 (կրծքաչափ, շրջակտրած) երևան է գալիս 5 անգամից ոչ ավելի, ամեն անգամ 10 վայրկյան ժամանակով։

**Հեռավորությունը**—300 մ։

**Փամփուշտները**—3։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից, փոկը կիրառելով։

**Ժամանակը հրաձգության համար**—որոշվում է նպատակի երևան գալու միջոցով։

**Դիպումները ցույց տալը**—յուրաքանչյուր ձիգից հետո։

**Գնահատումը**—հարվածել ֆիգուրը երկու գնդակով։

**Կատարման կարգը**—հրահանգիչը ցույց է տալիս հրաձգին հրաձգության և նպատակի երևան գալու տեղը։ Հրացանը լցնում է հրահանգիչը երեք մարտական և երկու վարժական-կոնտրոլ փամփուշտով։ Մարտական փամփուշտով ձիգից հետո հրահանգիչը հայտնում է հետևանքը։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակն** է՝ հակագազը հագած մարտական հրացանով հրաձգության պրակտիկա տալ։

**Նպատակը**—№ 12 (կրծքաչափ, շրջակտրած)։

**Հեռավորությունը**—300 մ։

**Փամփուշտները**—3։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած՝ ձեռքից (փոկի և հենարանի կիրառումը թույլ է տրվում)։

**Ժամանակը հրաձգության համար**—15 վայրկյան յուրաքանչյուր ձիգի համար։

**Գնահատումը**—հարվածել ֆիգուրը երեք գնդակով։

**Կատարման կարգը**—հրահանգչի հրամանով սովորողը հագնում է հակագազը և պատրաստվում է հրաձգության համար։ Հրացանը լցնում է հրահանգիչը մարտական և վարժական-կոնտրոլ փամփուշտներով։ Հրահանգչի հրամանով սովորողը կրակ է բաց անում։ Մարտական փամփուշտով ձիգից հետո հրա-

հանդիչը հայտնում է հետևանքը և հրաձգության համար ծախսած ժամանակը։

Հրաձգությունից առաջ թույլատրվում է յուղել և սրբել հակագազի ապակիները։

4-րդ և 5-րդ վարժությունները կատարածներին թույլ է տրվում հանձնել 2-րդ աստիճանի ՎՀ նորմաները II և III կլասիֆիկացիոն վարժությունների համաձայն։

### Փամփուշտների հաշվարկը

| | | |
|---|---|---|
| Նախապատրաստական վարժություններ | 15 մարտական | և 10 փոքրակալիբր |
| Կլասիֆիկացիաների հանձնումը | 14 » | |
| Հրահանգչի պահեստը | 14 » | 5 » |
| Ընդամենը | 43 մարտական | և 15 փոքրակալիբր։ |

### ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

«Наставление по стрелковому делу» (НСД—38), винтовка обр. 1891/1930 г.—«Հրահանգ հրաձգային գործի» (ՀՀԳ—38), 1891/1930 թ. տիպարի հրացան։

«Наставление по подготовке к рукопашному бою РККА» НПРБ—38).—«Հրահանգ ԲԳԿԲ ձեռնամարտի համար պատրաստության» (ՀՁՄԳ—38)։

«Наставление по стрелковому делу» (НСД—38), ручные гранаты.—«Հրահանգ հրաձգային գործի» (ՀՀԳ—38), ձեռքի նռնակներ։

Курс огневой подготовки РККА (КОП—38), строевой устав пехоты РККА.—ԲԳԿԲ կրակային պատրաստության կուրսը (ԿՊԿ—38), ԲԳԿԲ հետևակի շարային կանոնագիրք։

«Общевойсковая подготовка», Редиздат ЦС Осоавиахима СССР 1938 г.—«Համազորական պատրաստություն»։

«Огневая подготовка», Редиздат ЦС Осоавиахима СССР, 1938.—«Կրակային պատրաստություն»։

«Прикладная баллистика для стрелка»—Пономарев П. Д.—Կիրառական ձգաբանություն հրաձգի համար»։

«Краткие сведения об основаниях стрельбы из ружей и пулеметов»—Филатов.—«Համառոտ տեղեկություններ հրացաններով և գնդացիրներով հրաձգության հիմունքների մասին»։

«Красноармейская стрелковая линейка»—«Կարմիր բանակային հրաձգային քանոն»։

## 4. ԾՐԱԳԻՐ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ԳՆԴԱՑՐՈՐԴԻ (ДП ԴԵԳՏՅԱՐԵՎԻ ՀԵՏԵՎԱԿԱՅԻՆ ԳՆԴԱՑՐՈՎ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

### Ժամերի հաշվարկը

| | |
|---|---|
| Ձեռքի գնդացրի նյութական մասը | 8 ժամ |
| Ձեռքի նռնակի նյութական մասը | 2 |
| Ձեռքի նռնակի նետման տեխնիկան | 6 ժամ |
| Շարային պատրաստություն | 4 » |
| Հրաձգության հիմունքները | 8 » |
| Կրակային պատրաստություն | 36 » |
| Ընդամենը | 64 ժամ |



### Ձեռքի գնդացրի նյութական մասը

Իմանալ։ Գնդացրի մարտական հատկությունները և կառուցվածքը, ինչից և ինչպես է տեղի ունենում ձիգը, ավտոմատիկ գործողության էությունը, գնդացրի մասերի աշխատանքը, հրաձգության ժամանակ խափանումներ առաջացնող պատճառները, փամփուշտի կառուցվածքը, տարբերով սահմանված պահեստի մասերը, պատկանելիքները և դրանց պահելը։

Կարողանալ։ Հայտաբերել և վերացնել խափանումները, քանդել, հավաքել, մաքրել, յուղել, խնամել և պահել ձեռքի գնդացիրը, զննել այն հրաձգությունից առաջ և հետո և նախապատրաստել հրաձգության համար, ջոկել լավորակ փամփուշտները հրաձգության համար, լցնել պահեստարանը։

### Ձեռքի նռնակի նյութական մասը (1914/30 թ. տիպարի)

Իմանալ։ Ձեռքի նռնակի նշանակումը, կառուցվածքը, մարտական հատկությունները և նրա հետ վարվելու ձևերը։

Կարողանալ։ Լցնել և դատարկել նռնակը, հագցնել պաշտպանողական շապիկը, նռնակի մեջ մտցնել բուծենը, նախապատրաստել նռնակը նետման համար, տարբերել մեխանիզմների սարքինությունը, վարվել դետոնատորի հետ։

### Նռնաձգության կանոնները

Կարողանալ։ Նռնակները նետել հորիզոնական և ուղղաձիգ նպատակների վրա զանազան դրություններից, զենքով և առանց զենքի, տեղից և շարժման ժամանակ, նռնակների կապոց պատրաստել և նետել այն տանկի վրա։

### Հրաձգության հիմունքները

Իմանալ։ Ինչպես է թռչում գնդակն օդում, հետագծի բարձրագունությունը մինչև 800 մ հեռավորությամբ հրաձգու-

թյան ժամանակ, մեռյալ և հարվածելի տարածությունների մեծությունները, գնդակների բնական ցրման պատճառները և միջուկների մեծությունները մինչև 800 մ հեռավորության վրա։

**Կարողանալ։** Օգտագործել ուղիղ ձիգը զանազան նպատակների վրա հրաձգություն կատարելիս, ուղղումներ մտցնել նշանոցի հասման մեջ և նշանակետ ընտրել, նայած արտաքին պայմաններին, վերացնել հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները, վորոնք կախված են գնդացրորդից, զենքից և յեղանակից։

## Ձեռքի գնդացրով հրաձգության տեխնիկան ու ձևերը

**Իմանալ։** Գնդացրորդի պարտականությունները։

**Կարողանալ։** Ինքնուրույն կերպով տեղ ընտրել հրաձգության համար բազմազան վայրերում, օգտագործել հրաձգության համար ծածկարանները՝ խրամատը, արկից առաջացած ձագարը, առուն և մյուս տեղական առարկաները. քողարկել իրեն և գնդացիրը տեղում դասավորման և շարժման ժամանակ. դիտել մարտադաշտը, վորոնել, ցույց տալ, գնահատել և ընտրել նպատակները. վորոշել մինչև նպատակները և տեղական առարկաները յեղած հեռավորությունը 800 մ սահմաններում (աչքաչափով և հրաձգային քանոնի օգնությամբ մինչև 10% ճշտությամբ). կազմել հրաձգային քարտը, վորոշել փամփուշտների քանակը՝ նպատակը հարվածելու համար, դիպուկ հարվածել նպատակները հատ-հատ և ավտոմատիկ կրակով մինչև 300 մ հեռավորությամբ, դիտել գնդակների անկումը և ճշտել իր կրակը, նշանոցի և նշանակետի անհրաժեշտ ուղղումներ մտցնելով։

## Շարային պատրաստություն

**Իմանալ։** Մարտիկի պարտականությունները շարվելուց առաջ և շարքում։

**Կարողանալ։** Գործել շարքում ջոկի կազմում զենքով և առանց զենքի։

## Փոքրակալիբր փամփուշտներով նախապատրաստական հրաձգությունների վարժություն

**Վարժության նշանակումն** է՝ անշարժ նպատակի վրա հրաձգություն կատարելու պրակտիկա տալ։



**Թիրախը**—№ 12 (կրծքաչափ), 5 անգամ փոքրացրած։

**Հեռավորությունը**—50 մ։

**Փամփուշտները**—3։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած։

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ։

**Գնահատումը**—նպատակը հարվածել յերեք գնդակով։

**Կատարման կարգը**—հրաձգության համար փոքրակալիբր հրացանին հարմարեցնում են գնդացրային նեցուկները, սովորողները հրաձգության ժամանակ պահպանում են՝ գնդացրով նեցուկներից հրաձգության պատրաստվելու բոլոր առանձնահատկությունները։ Հրահանգչի հրամանով գնդացրորդը լցնում է գնդացիրը (փոքրակալիբր հրացանը) և կրակ է բաց անում։

## Մարտական փամփուշտներով նախապատրաստական հրաձգությունների վարժություններ

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** է՝ անշարժ նպատակի վրա մեկական ձիգով հրաձգության պրակտիկա տալ։

**Թիրախը**—№ 11 (գլխաչափ)։

**Հեռավորությունը**—100 մ։

**Փամփուշտները**—2։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած։

**Ժամանակը հրաձգության համար**—անսահմանափակ։

**Գնահատումը**—հարվածել նպատակը յերկու գնդակով։

**Դիպումները ցույց տալը**—յուրաքանչյուր ձիգից հետո։

**Կատարման կարգը**—հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության։ Պատրաստության կանոնավորությունը ստուգելուց հետո հրահանգիչն ինքը մտցնում է փամփուշտը հրացանը լցնելու համար, անպայմանորեն հերթագայելով մարտական փամփուշտները վարժականների հետ, վորպեսզի ձիգն անսպասելի լինի սովորողի համար. մարտական փամփուշտը պետք է դնել միայն այն ժամանակ, յերբ 2—3 վարժական փամփուշտով հրահանգիչը կհամոզվի, վոր սովորողի գործողությունները միանգամայն ճիշտ են ձիգ կատարելու համար։

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** է՝ ավտոմատիկ կրակով անշարժ նպատակի վրա հրաձգություն կատարելու պրակտիկա տալ։

**Թիրախը**—*№ 12 (կրծքանշան):*

**Հեռավորությունը**—*200 մ:*

**Փամփուշտները**—*3 (մեկ հերթով):*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած:*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ:*

**Գնահատումը**—*Նպատակը հարվածել յերկու գնդակով:*

**Կատարման կարգը**—*հրահանգչի հրամանով սովորողը պատրաստվում է հրաձգության: Պատրաստության և նշանոցի հաստման կանոնավորությունը ստուգելուց հետո հրահանգիչը հրամայում է լցրած պահեստարան տալ և «կրակ» ազդանշան է տալիս, վորի համաձայն սովորողը լցնում է գնդացիրը և գնդակոծում է նպատակը մեկ հերթով:*

## ՅԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն է՝** *ավտոմատիկ կրակով անշարժ նպատակի վրա հրաձգություն կատարելու պրակտիկա տալ:*

**Թիրախը**—*№ 19 (ձեռքի գնդացիր) կամ № 14 (վազեվազք), հրահանգչի հայեցողությամբ:*

**Հեռավորությունը**—*300 մ.:*

**Փամփուշտներ**—*3:*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած:*

**Ժամանակը հրաձգության համար**—*1 րոպե լցնելու հետ միասին:*

**Գնահատումը**—*հարվածել թիրախը յերկու գնդակով:*

**Կատարման կարգը**—*հրահանգչի հրամանով գնդացրորդը հաստում է գնդացիրը դիրքում: Գնդացրի հաստման համար—1 րոպե: Հրահանգչի հրամանով գնդացրորդը լցնում է գնդացիրը, հաստում է մատնանշված նշանոցը և գնդակոծում է նպատակը: Ժամանակը հրաձգության համար հաշվվում է հրահանգչի հրամանի սկզբից:*

**Փամփուշտների հաշվարկը**

| | | |
|---|---|---|
| *Նախապատրաստական վարժություններ* | *—3 փոքրակալիբր,* | *8 մարտական* |
| *Կլասիֆիկացիայի նորմաների հանձնում—* | | *6 »* |
| *Հրահանգչի պահեստը . . . . . . .* | *6 »* | *10 »* |
| *Ընդամենը . . .* | *9 փոքրակալիբր,* | *24 մարտական* |

## ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

НСД—38, ручной пулемет.—*ՀՀԴ—38, ձեռքի գնդացիր:*

НСД—38, ручные гранаты.—*ՀՀԴ—38, ձեռքի նռնակներ:*



Курс огневой подготовки РККА (КОП—38)—*ԲԳԿԲ կրակային պատրաստության կուրսը (ԿՊԿ—38):*

«Огневая подготовка», Редиздат ЦС Осоавиахима СССР, 1938 г.—*«Կրակային պատրաստություն»:*

«Общевойсковая подготовка», Редиздат ЦС Осоавиахима СССР, 1938 г.—*«Համազորական պատրաստություն»:*

«Прикладная баллистика для стрелка»—Пономарев П. Д.—*«Կիրառական ձգաբանություն հրաձգի համար»:*

«Краткие сведения об основаниях стрельбы из ружей и пулеметов.—Филатов—*«Համառոտ տեղեկություններ հրացաններով և գնդացիրներով հրաձգային հիմունքների մասին»:*

## 5. ԾՐԱԳԻՐ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ԳՆԴԱՑՐՈՐԴԻ (ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑԻՐ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

**Ժամերի հաշվարկը (մոտավոր)**

| | | |
|---|---|---|
| *Հրաձգության հիմունքները . . . . . . . . . . . . .* | *8* | *ժամ* |
| *Գնդացրի նյութական մասը . . . . . . . . . . . . .* | *20* | *»* |
| *Ձեռքի նռնակի նյութական մասը և նետման տեխնիկան* | *8* | *»* |
| *Կրակային պատրաստություն . . . . . . . . . . . .* | *32* | *»* |
| *Շարային պատրաստություն . . . . . . . . . . . .* | *4* | *»* |
| *Ընդամենը . .* | *72* | *ժամ* |

**Հրաձգության հիմունքները**

Իմանալ: *Ձիգի յերևույթները, գնդակի շարժումը փողի մեջ և նրա թռիչքն օդում, հարվածելի և մեռյալ տարածությունները, հետագծի բարձրագունությունը մինչև 1000 մ հեռավորությամբ հրաձգության ժամանակ, գնդակների բնական ցրման պատճառները և միջուկի մեծությունը մինչև 1000 մ հեռավորությունների վրա:*

Կարողանալ: *Օգտագործել ուղիղ ձիգը զանազան նպատակների վրա հրաձգության ժամանակ, ինքնուրույն կերպով ուղղումներ մտցնել նշանոցի և ուղղանի հաստման մեջ, հաշվի առնելով այն խոտորումները, վորոնք տեղի յեն ունենում քամու, շեղման և օդի ջերմաստիճանի հետևանքով, վերացնել հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները, վորոնք կախում ունեն գնդացրորդից և զենքից, և վորոշել փամփուշտների քանակը նպատակը հարվածելու համար:*

**Հաստոցավոր գնդացրի նյութական մասը**

**Իմանալ:** Գնդացրի մարտական հատկությունները և կառուցվածքը, ինչից և ինչպես է տեղի ունենում ձիգը, ավտոմատիկ գործողության էությունը, մեխանիզմների աշխատանքը և համագործակցությունը, մաքրելու, խնամելու և պահելու կանոնները, խափանումների պատճառները, փամփուշտի կառուցվածքը:

**Գաղափար ունենալ** անկյունաչափ-կվադրանտի կառուցվածքի մասին:

**Կարողանալ:** Քանդել ու հավաքել գնդացիրը, նախապատրաստել այն հրաձգության համար, մաքրել, յուղել, խնամել և պահել գնդացիրը, վերացնել խափանումները, կատարել ժապավենների զննումը և լցնել դրանք փամփուշտներով:

**Հաստոցավոր գնդացրով կրակ վարելու կանոնները**

**Իմանալ:** Գնդացրային համրանքի պարտականությունները:

**Կարողանալ:** Տեղ ընտրել հրաձգության համար, քողարկել իրեն և գնդացիրը տեղում դասավորման ժամանակ՝ յեղանակի, տարվա յեղանակների և այլ ամեն մի պայմանում, հակառակորդի դիտողություն կատարել չզինված աչքով. կազմել գնդացրային քարտ, գտնել, ցույց տալ, գնահատել և ընտրել նպատակները և որոշել մինչև նպատակներն ու տեղական առարկաները յեղած հեռավորությունն աչքաչափով (և ամենահասարակ գործիքների օգնությամբ) մինչև հեռակայության 10 % ճշտությամբ, դիպուկ հարվածել նպատակները մենազարկ և ավտոմատիկ կրակով, դիտել իր կրակի գործողությունը և ճշտել այն:

**Նռնակի նյութական մասը յեվ նետման տեխնիկան (նույնը, ինչ վոր ձեռքի գնդացրորդի համար)**

**Շարային պատրաստություն**

**Իմանալ:** Հաստոցավոր-գնդացրային ջոկի մարտիկի պարտականությունները:

**Կարողանալ:** Գործել շարքում՝ հաստոցավոր-գնդացրային ջոկի կազմում:



**Փոքրակալիբր փամփուշտներով նախապատրաստական հրաձգությունների վարժությունները**

## ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** է՝ անշարժ նպատակի մի կետի վրա մեկական ձիգերով հրաձգություն կատարելու պրակտիկա տալ:

**Նպատակը**—3 քառակուսի, 5×5 սմ չափերով, վահանի վրա:

**Հեռավորությունը**—20 մ:

**Փամփուշտները**—3:

**Ժամանակը հրաձգության համար**—3 րոպե:

**Գնահատումը**—հարվածել 3 քառակուսի:

**Կատարման կարգը**—քառակուսիները փակցվում են վահանի վրա զանազան բարձրությամբ և տարբեր միջանցներով: Գնդացրորդը հրամանի համեմատ լցնում է գնդացիրը, հատում է նշանոցային հարմարանքները և մեկական ձիգերով գնդակոծում է հաջորդաբար քառակուսիները: Ցրող և վերամբարձ մեխանիզմներն ամրացվում են յուրաքանչյուր նշանառությունից հետո:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** է՝ անշարժ նպատակի մի կետի վրա մեկական ձիգերով, կրակը տեղափոխելով, հրաձգություն կատարելու պրակտիկա տալ:

**Նպատակը**—№ 12 վեց թիրախ (կրծքաչափ, 10 անգամ փոքրացրած) վահանի վրա:

**Հեռավորությունը**—20 մ:

**Փամփուշտները**—6:

**Ժամանակը հրաձգության համար**—3 րոպե:

**Գնահատումը**—հարվածել՝ «գերազանց»—6 ֆիգուր, «լավ»—5 ֆիգուր:

**Կատարման կարգը**—Թիրախները փակցվում են վահանի վրա զանազան բարձրությամբ և տարբեր միջանցներով: Գնդացրորդը հրամանի համեմատ լցնում է գնդացիրը, հատում է նշանոցային հարմարանքները և ինքնուրույն կերպով հաջորդաբար գնդակոծում է նպատակները: Յուրաքանչյուր նշանառությունից հետո մեխանիզմներն ամրացվում են: Ժամանակը հրաձգության համար հաշվվում է «կրակ» հրամանից:

## ՅԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** ե՝ լայն նպատակի՝ ըստ ճակատի գնդակների հավասարաչափ ցրումով, գնդակոծման պրակտիկա տալ:

**Նպատակը**—5×45 սմ մի շերտ, վորը բաժանված ե 5 հավասար մասերի, յուրաքանչյուրի մեջ 3-ական հավասար ուղղանկյունի, և փակցված ե վահանի վրա հորիզոնական ուղղությամբ:

**Հեռավորությունը**—20 մ:

**Փամփուշտները**—15:

**Ժամանակը հրաձգության համար**—1 րոպե:

**Գնահատումը**—խփել «գերազանց» —75 աչկո, «լավ»—60 աչկո, «բավարար»—40 աչկո: Ուղղանկյունու հարվածումը, նրան դիպցրած գնդակների թվից անկախ, գնահատվում ե հինգ աչկո: Աչկոների քանակին ավելացվում ե՝ 3 տեղամասի հարվածման դեպքում—10 աչկո, 4 տեղամասի համար—15 աչկո և 5 տեղամասի համար—25 աչկո:

**Կատարման կարգը**—գնդացրորդը հրամանի համեմատ լցնում ե գնդացիրը, հաստատում ե նշանոցային հարմարանքները, գնդացիրը նշան ե դնում նպատակի ձախ յեզրին և գնդակոծում ե այն անընդհատ կրակով, ըստ ճակատի ցրումով:

## ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** ե՝ խորը նպատակի՝ ըստ խորության գնդակների հավասարաչափ ցրումով, գնդակոծման պրակտիկա տալ:

**Նպատակը**—6×20 սմ մի շերտ, վորը բաժանված ե 5 հավասար ուղղանկյունների և փակցված ե վահանի վրա ուղղաձիգ ուղղությամբ:

**Հեռավորությունը**—20 մ:

**Փամփուշտները**—10:

**Ժամանակը հրաձգության համար**—45 վայրկյան:

**Գնահատումը**—հարվածել՝ «գերազանց»—5 ուղղանկյունի, «լավ»—4 ուղղանկյունի:

**Կատարման կարգը**—սովորողը հրամանի համեմատ լցնում ե գնդացիրը, հաստատում ե նշանոցային հարմարանքները, նշան ե բռնում նպատակի ներքևի յեզրի տակին, հաստատում ե նշանոցային ողակը (31—քայլերով, 22—մետրերով) և գնդակոծում ե նպատակն անընդհատ կրակով, ըստ խորության ցրումով (դեպի առաջ), մոտավորապես նշանոցային ողակի մեկ բաժանումով:



### Մարտական փամփուշտով նախապատրաստական հրաձգությունների վարժություն

**Վարժության նպատակն** ե՝ անշարժ նպատակի մի կետի վրա ավտոմատիկ կրակով հրաձգության պրակտիկա տալ:

**Նպատակը**—№ 12 (կրծքաչափ):

**Հեռավորությունը**—200 մ:

**Փամփուշտները**—5 (մեկ հերթով),

**Ժամանակը հրաձգության համար**—1 րոպե լցնելու հետ միասին:

**Գնահատումը**— հարվածել նպատակը՝ «գերազանց» — 4 գնդակով, «լավ»—3 գնդակով:

**Կատարման կարգը**—գնդացրորդը հրամանի համեմատ լցնում ե գնդացիրը, հաստատում ե մատնանշված նշանոցը և ուղղանը, նշան ե դնում գնդացիրը նպատակին և մեկ հերթով (անընդհատ) գնդակոծում ե այն: Մեխանիզմներն ամրացվում են:

**Փամփուշտների հաշվարկը**

| | | |
|---|---|---|
| Նախապատրաստական վարժություններ | 34 փոքրակալիբ | 5 մարտական |
| Կլասիֆիկացիոն նորմաների հանձնումը— | | 20 » |
| Հրահանգչի պահեստը . . . . . . . . | 25 » . . . | 15 » |
| Ընդամենը . . . | 59 փոքրակալիբր, | 40 մարտական |

### ՁԵՌՆԱՐԿՆԵՐ


НСД, Станковый пулемет.—ՀՀԳ, հաստոցավոր գնդացիր:

Курс огневой подготовки РККА (КОП—38).—ԲԳԿԲ կրակային պատրաստության կուրս (ԿՊԿ—38):

«Подготовка пулеметчика станкового пулемета», Редиздат ЦС Осоавиахама СССР, 1938 г.—«Հաստոցավոր գնդացրի գնդացրորդի պատրաստությունը»:

«Общевойсковая подготовка», издание ЦС Осоавиахима СССР, 1937 г.—«Համազորական պատրաստություն»:

## 6. ՄԱՐՏԱԿԱՆ ԱՏՐՃԱՆԱԿՈՎ ԿԱՄ ՊԻՍՏՈԼԵՏՈՎ ՀՐԱՁԳԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

**Ժամերի հաշվարկը (մոտավոր)**

| | |
|---|---|
| Կրակային պատրաստություն | 28 ժամ |
| Հրաձգության հիմունքները | 5 » |
| Զենքի նյութական մասը | 4 » |
| Ընդամենը | 37 ժամ |

**Ատրճանակի կամ պիստոլետի նյութական մասը**

**Իմանալ**։ *Ատրճանակի սիստեմի անունը և նրա մարտական հատկությունները, մասերի և մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը, ատրճանակի (պիստոլետի) մեխանիզմների անսարք գործողության պատճառները, խափանումների վերացման և կանխման յեղանակները, ատրճանակը խնամելու և պահելու կանոնները, մարտական փամփշտի կառուցվածքը։*

**Կարողանալ**։ *Քանդել, հավաքել, մաքրել և զննել ատրճանակը (պիստոլետը) հավաքած և քանդած վիճակում, վորոշել անսարքինությունները, պահել ատրճանակը (պիստոլետը) շենքի մեջ, վրանում, յերթի ժամանակ և այլն, պահպանել անվտանգության միջոցներն ատրճանակի հետ վարվելու ժամանակ։*

**Հրաձգության հիմունքները**

**Իմանալ**։ *Ինչից և առաջանում ձիգը, ինչպես և թռչում գնդակն ոդում, հեռագծի բարձրագունությունը և ցածացումը նշանառության գծի նկատմամբ՝ ատրճանակով հրաձգության ժամանակ, ձիգերի ցրման մեծությունը և գնդակի թռիչքի ժամանակը 50 մ հեռավորությամբ, գնդակի ծակողական ընդունակությունը, հրաձգության դիպուկության իջեցման վրա ազդող պատճառները, վորոնք կախված են հրաձիգներից և զենքից։*

**Ձիգ կատարելու տեխնիկան**

**Կարողանալ**։ *Լցնել, դատարկել ատրճանակը (պիստոլետը), կրակ վարել անսահմանափակ և սահմանափակ ժամանակի ընթացքում։*



**Փոքրակալիբր փամփշտով նախապատրաստական հրաձգություններ վարժությունները**

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակումն** *է՝ անշարժ նպատակի վրա դիպուկ հրաձգություն կատարելու պրակտիկա տալ։*

**Թիրախը**—*№ 5 կամ 4։*

**Հեռավորությունը**—*15 մ։*

**Դրությունը հրաձգության համար**—*կանգնած՝ ձեռքից։*

**Փամփուշտները**—*3։*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ։*

**Դիպումները ցույց տալը**—*յուրաքանչյուր ձիգից հետո։*

**Գնահատումը**—*վոչ մի գնդակ դուրս չթողնել՝ «գերազանց»—№ 8 շրջանից, «լավ»—№ 6 շրջանից։*

**Կատարման կարգը**—*հրահանգիչն ինքը՝ սովորողի համար աննկատելի կերպով մտցնում է փամփուշտներն ատրճանակի (կամ պիստոլետի) պահեստարանի մեջ, հերթագայելով մարտական փամփուշտը վարժականի հետ։ Մարտական փամփուշտը պետք է մտցնել այն ժամանակ, յերբ հրահանգիչը 2—3 վարժական փամփշտով նախապես կհամոզվի, վոր սովորողի գործողությունները միանգամայն ճիշտ են՝ դիպուկ ձիգ կատարելու համար։*

### ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նպատակումն** *է՝ անշարժ նպատակի վրա դիպուկ հրաձգության պրակտիկա տալ։*

**Թիրախը**—*№ 5։*

**Հեռավորությունը**—*25 մ։*

**Դրությունը հրաձգության համար**—*կանգնած՝ ձեռքից։*

**Փամփուշտները**—*3։*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ։*

**Դիպումները ցույց տալը**—*բոլոր ձիգերից հետո։*

**Գնահատումը**—*խփել առնվազն 24 աչկո։*

**Կատարման կարգը**—*հրահանգչի հրամանով սովորողը լցնում է ատրճանակը (պիստոլետը) յերեք փամփշտով և կրակ է բաց անում։ Այն սովորողներին, վորոնք կատարել են վարժությունը, թույլ է տրվում հանձնել առաջին կլասիֆիկացիոն նորման՝ ատրճանակով (պիստոլետով) հրաձգի կոչում ստանալու համար։*

## ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Վարժության նշանակումն** է՝ անշարժ նպատակի վրա անսահմանափակ ժամանակում դիպուկ հրաձգություն կատարելու պրակտիկա տալ:

**Թիրախը**—№ 5:

**Հեռավորությունը**—25 մ:

**Դրությունը հրաձգության համար**—կանգնած՝ ձեռքից:

**Փամփուշտները**—3:

**Ժամանակը հրաձգության համար**—ատրճանակի համար—18 վայրկյան, ծխալից պիստոլետի համար—6 վայրկյան յուրաքանչյուր ձիգի համար (առանց լցնելու):

**Դիպումները ցույց տալը**—բոլոր ձիգերից հետո:

**Գնահատումը**—խփել առնվազն 21 աչկո:

**Կատարման կարգը**—«կրակ» հրամանից առաջ հրաձիգը զենքը լցրած պահում է կիսածալած ձեռքում, որն ուղղված է թիրախի կողմը և դեպի վեր, «կրակ» հրամանով (ազդանշանով) մարտական վոտքի վրա յե դնում հրահանը և կրակ բաց անում:

Վարժությունը մշակվում է մինչև «լավ» գնահատականով կատարելը, և միմիայն դրանից հետո հրաձգին թույլ է տրվում հանձնել յերկրորդ կլասիֆիկացիոն վարժության նորմաները:

### Փամփուշտների հաշվարկը

| | |
|---|---|
| 1-ին վարժություն | 3 հատ |
| 2-րդ » | 3 » |
| 3-րդ » | 3 » |
| Կլասիֆիկացիայի հանձնումը | 13 » |
| Հրահանգչի պահեստը | 15 » |
| Ընդամենը | 37 » |

### ՁԵՌՆԱՐԿՆԵՐ


НСД, Личное оружие.—ՀՀԳ, Անձնական զենք: КОП—38.—ԿԳԿ—38:

Пономарев.—Техника стрельбы из револьвера (пистолета), материальная часть и история развития. Военгиз, 1938 г. Ատրճանակով (պիստոլետով) հրաձգության տեխնիկան, նյութական մասը և զարգացման պատմությունը:




## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 1. Հրահանգ՝ նորմաները հանձնելու ժամանակ ստուգումները յեվ կոնտրոլ հրաձգությունները անցկացնելու համար

1. Կլասիֆիկացիոն նորմաները՝ վորոշիլովյան պատանի հրաձիգ, վորոշիլովյան հրաձիգ 1-ին աստիճանի, վորոշիլովյան հրաձիգ 2-րդ աստիճանի, վորոշիլովյան գնդացրորդ և հրաձիգ ատրճանակով (պիստոլետով) ընդունում են այն հրահանգիչները, վորոնք պատրաստել են հրաձիգներին:

2. Կլասիֆիկացիան տրվում է հրաձիգներին այն ժամանակ, յերբ նրանք կհանձնեն՝ հրաձգության հիմունքների և զենքի նյութական մասի քննությունները հրաձգի պատրաստման ծրագրի ծավալով:

3. Ստուգումից առաջ հրահանգիչը պարտավոր է ծանոթացնել հրաձիգներին կլասիֆիկացիայի ծրագրի և այս հրահանգի հետ:

4. Ստուգումները պետք է կատարել կլասիֆիկացիայի ծրագրի պայմանների ճիշտ կատարման, նույնպես և հեռավորությունների և թիրախների չափերի ճիշտ պահպանման ժամանակ:

5. Այն նորմաները, վորոնք կատարվել են հրաձգության ժամանակ վարժական պարապմունքների և մարզանքների կարգով, հաշվի չեն առնվում: Նորմաների կատարումը հաշվի յե առնվում այն ժամանակ, յերբ դրանք հանձնվում են հատուկ ստուգումների և մրցակցությունների ժամանակ: Մրցակցությունների ժամանակ հանձնած նորմաների փաստաթղթային ձևակերպման համար հրաձգին տրվում է դատավորական կոլլեգիայի արձանագրության քաղվածքը:

6. Այն կոմպլեքսները, վորոնք բաղկացած են յերկու և ավելի վարժություններից, հանձնվում են բաժնակի կերպով (հրահանգչի հայեցողությամբ և հրաձգի ցանկությամբ թույլատրվում է վողջ կոմպլեքսը միանգամից հանձնել): Մեկ կոմպլեքսի նորմաների հանձնումը չպետք է շարունակվի մեկ ամսից ավելի, առաջին վարժության հանձնման որից հաշված:

7. Բոլոր կլասիֆիկացիոն նորմաների կատարման ժամանակ դիպումների արժեքի գնահատումը կատարվում է.

ա) կլոր թիրախի և շրջանների վրա նկարած ֆիգուրի ժամանակ՝ գնդակով զաբարկուի խախտման միջոցով, վորը պարզ տեսանելի յե առանց հատուկ գործիքների կիրառման.

բ) Ֆիգուրավոր շրջանակված թիրախի ժամանակ դիպում է համարվում ֆիգուրի մեջ առնված ծակոտի կեսի առկայությունը. ընդոստյունի (ռիկոշետ) հետևանքով դիպումները և այրվածքները հաշվի չեն առնվում.

գ) ծակոտին դիպած գնդակը հաշվի չի առնվում միայն այն դեպքում, յեթե պարզ յերևում է յերկրորդ գնդակի հետքը:

8. Բոլոր ֆիգուրավոր թիրախները պետք է խնամքով շրջանակել իրենց ուրվագծի համեմատ, 10 մմ լայնությամբ յեզր թողնելով: Թիրախը փակցվում է թիրախի ձև ունեցող փաներային վահանի վրա: Վորպեսզի վահանը չծակվի, այն ամրացնում են մյուս կողմից ձողիկներով:

9. Վորոշիլովյան պատանի հրաձգի, վորոշիլովյան հրաձգի 1-ին աստիճանի նորմաները կատարելու և սահմանափակ ժամանակամիջոցում կատարվող բոլոր հրաձգությունների ժամանակ հրաձգության ճշտում չի թույլատրվում:

10. Ստուգումը հանձնածների համար ակտ է կազմվում յերկու օրինակից, նրա մեջ մատնանշելով հետևյալը.

ա) կազմակերպությունը.

բ) հրահանգչի ազգանունը, վորն անց է կացրել պատրաստությունը, և նրա կատեգորիան կամ զինվորական կոչումը (ռազմական վարժակայանների հրամանատարների, դպրոցների և բուհերի ռազմական ղեկավարների համար).

գ) վո՞ր կլասիֆիկացիոն նորմայով է անցկացվել ստուգումը.

դ) ստուգումը հանձնածների քանակը.

ե) հրաձիգների ազգանունները, վորոնք հանձնել են ստուգումը, մատնանշելով յուրաքանչյուր վարժության հետևանքներն առանձին-առանձին.

զ) հրաձգի պատրաստման ծրագրի թեորիական մասի գնահատականը յուրաքանչյուր դիսցիպլինից առանձին.

է) ստուգումն անցկացնելու ամիսն ու ամսաթիվը:

Ակտն ստորագրում է հրահանգիչը (ռազմական վարժակայանի հրամանատարը, ռազմական ղեկավարը), խմբակի ավագը և մեկ հրաձիգ, վորն ընտրվում է խմբակի ընդհանուր ժողովում: Ակտի մեկ օրինակը հանձնվում է Պաշավիաքիմի վերադաս կազմակերպությանը, յերկրորդը մնում է տեղական կազմակերպությունում:

Տեղական կազմակերպությունում թողնվող ակտին կցվում են՝ ՎՊՀ, ՎՀ 1-ին աստիճանի և տարճանակով (պիստոլետով) հրաձիգների նորմաները հանձնածների քննական թիրախները:

11. Վորոշիլովյան պատանի հրաձիգները, վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգները և տարճանակով (պիստոլետով) հրաձիգները հաստատվում են սկզբնական կազմակերպության խորհրդի կամ հրաձգային ակումբի կողմից. կամավոր սպորտային ընկերություններում հաստատվում են սկզբնական կազմակերպության խորհրդի կողմից:

Վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգները և գնդացրորդները հաստատվում են Պաշավիաքիմի քաղաքային և շրջանային խորհուրդների կողմից, Պաշավիաքիմի հրաձգային խմբակների, դպրոցների և ակումբների նույնպես և կամավոր սպորտային ընկերության կողմից ներկայացրած ակտերի հիման վրա:

12. Ստուգումների հետևանքները հաստատելուց հետո հրահանգիչը մտցնում է հրաձգի միասնական գրքույկի մեջ, վավերացնելով իր ստորա-



գրությամբ և Պաշավիաքիմի տեղական կազմակերպության կնիքով: Միաժամանակ լրացվում է հաշվառական հրաձգային քարտը: Քարտը պահվում է հրաձգի աշխատանքի տեղի Պաշավիաքիմի կազմակերպությունում:

13. Հրաձիգն իրավունք ունի բողոքարկել (գրավոր ձևով) ստուգումների ակտերը հաստատող կազմակերպությանը՝ նորմաներն ընդունելու հրահանգի խախտման մասին, վորը թույլ է տվել հրահանգիչը կամ հանձնաժողովը:

14. Հրաձիգների պատրաստման վորակի վերահսկողությունը և կլասիֆիկացիոն նորմաներն ընդունելու ժամանակ ստուգումների հրահանգի ճիշտ կատարման հետևելը Պաշավիաքիմի կազմակերպություններում և կամավոր սպորտային ընկերություններում դրվում է.

ա) շրջաններում և քաղաքներում՝ Պաշավիաքիմի շրջանային և քաղաքային խորհուրդների մարտական պատրաստության բաժնի (ՄՊԲ) պետի և հրաձգային սպորտի տեսչի վրա.

բ) մարզերում, յերկրամասերում և հանրապետություններում՝ մարտական պատրաստության բաժնի վրա հրաձգային սպորտի տեսուչների միջոցով:

Տեսչություն կատարողները կլասիֆիկացիոն նորմաներն ընդունելու ներկայացրած ակտի ցուցակով նշանակում են ստուգման համար առնվազն 5 մարդ ստուգումը հանձնածներից:

Ստուգումը կատարվում է՝ հրաձգի պատրաստման ծրագրի թեորիական և գործնական մասի բոլոր առարկաներից և կլասիֆիկացիայի մեկ վարժությունից (տեսչություն կատարողի հայեցողությամբ):

Պատրաստման վորակը համարվում է՝ «գերազանց», յեթե ստուգվողների կազմը կատարում է հրաձգության վարժությունը—90%, «լավ»—80%, «բավարար»—70% այն պայմանով, վոր բոլորը 100% յուրացրել են ծրագրի թեորիական մասը առնվազն «լավ» գնահատականով:

15. Այն հրահանգիչները, վորոնք թույլ են տվել հրահանգի խախտում դեպի սահմանված կլասիֆիկացիոն նորմաների ցածացման կողմը, հեռացվում են հրաձգային պատրաստության գործից:

Այն հրահանգիչները, վորոնք չեն ապահովում պատրաստվող հրաձիգների լավ վորակը, իջեցվում են իրենց կատեգորիայից:

16. Վորպեսզի մրցակցություններին չմասնակցող հրաձիգները չկորցնեն իրենց կլասիֆիկացիան, նրանց համար ստուգում է սահմանվում վերջին կատարած նորմայից (կոնտրոլ վարժություն) հետևյալ ժամկետներով.

ՎՀ 1-ին աստիճանի 1 տարի (2-րդ վարժություն):

ՎՀ 2-րդ աստիճանի—2 տարի (1-ին վարժություն):

Հրաձիգ՝ տարճանակով (պիստոլետով)—1 տարի (1-ին վարժություն):

Վորոշիլովյան գնդացրորդ հաստոցավոր գնդացրի—2 տարի (1-ին վարժություն), վորոշիլովյան գնդացրորդ ձեռքի գնդացրի—2 տարի (քննական վարժություն), սնայպեր—2 տարի:

Յեթե նշանակված ժամկետներում հրաձիգը չկատարի այս պարագրաֆի պահանջները, նա կորցնում է կոչումը և համապատասխան կրծքանշանը կրելու և իր խմբակի մրցակցություններին մասնակցելու իրավունքը:

Վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգների ստուգումն անց է կացվում սկզբնական կազմակերպություններում, վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգների, վորոշիլովյան գնդացրորդների և տարճանակով (պիստոլետով)

հրաձիգների ստուգումն անց է կացվում Պաշավիաքիմի շրջանային և քաղաքային կազմակերպություններում, կամավոր սպորտային ընկերություններում, հրաձգային ակումբներում (նույնպես և սկզբնական կազմակերպություններում՝ նյութական մասի առկայության դեպքում)։

Նորմաների վերահանձնմանը պետք է նախորդեն նախնական մարզանքը և վարժական աշխատանքը խմբակներում և մշտական կոմանդաներում։

Նորմաների վերահանձնման աշխատանքն անց են կացնում հրահանգիչները։ Նորմաների կրկնակի կատարման կարգը նույնն է, ինչ վոր դրանց ընդունման ժամանակ։

Հրաձգի փաստաթղթերում նշում է արվում կոնտրոլ վարժությունների կատարման մասին։

Ծանոթություն 1։ Սնայպերի կոչումը հաստատվում է մարզային, յերկրամասային և հանրապետական Մարտական պատրաստության բաժինների կողմից ստուգումներից հետո, հատուկ հանձնաժողովի ակտի հիման վրա։

Ծանոթություն 2։ Հրաձիգ-վարպետի կոչումը տրվում է այն հրաձիգներին, վորոնք ունեն սնայպերի հրաձգային կլասիֆիկացիա, հանդիսանում են սպորտ-հրաձգային աշխատանքի ակտիվիստներ և կատարել են կլասիֆիկացիոն վարժությունները մարզային, հանրապետական և համամիութենական մրցակցություններում։

Ծանոթություն 3։ Հրաձգային սպորտի վարպետի կոչումը հաստատվում է Պաշավիաքիմի ԿԽ Մարտական պատրաստության վարչության կից սպորտ-հրաձգային բաժնի խորհրդի կողմից, Պաշավիաքիմի մարզային, քաղաքային և հանրապետական խորհուրդների և կամավոր սպորտային ընկերությունների ներկայացման համաձայն, ստացած դատավորական կոլլեգիայի արձանագրությունների և հրաձգային սպորտի բնագավառում կատարած հասարակական աշխատանքի բնութագրերի հիման վրա։

Ծանոթություն 4։ Կլասիֆիկացիոն մրցակցություններն անցկացնելու թույլտվությունը հանրապետություններում, յերկրամասերում, մարզերում և քաղաքներում պլանից դուրս ամեն անգամ տալիս է ԽՍՀՄ Պաշավիաքիմի կենտխորհրդի Մարտական պատրաստության վարչության սպորտ-հրաձգային բաժինը։

## 2. Հրահանգ տիրերում յեվ հրաձգարաններում հրաձգություններ անցկացնելու կարգի մասին

1. Փոքրակալիբր կամ մարտական փամփուշտներով հրաձգություն անցկացնելու ժամանակ կարգ պահպանելու և ինչպես տիրերում, այնպես էլ հրաձգարաններում (պոլիգոններում) հրաձգություններ անցկացնելու անվտանգության համար պատասխանատվությունը դրվում է հրաձգություններն անցկացնող ղեկավարների վրա, վորոնք պարտավոր են յերկու դեպքերում էլ նշանակել իրենց համար հրաձգության ոգնական խմբակի անդամներից (դպրոցի կուրսանտներից)։

Յեթե հրաձգարաններում միաժամանակ կրակում են մի քանի առանձին դպրոցներ, խմբակներ, ապա բացի ղեկավարների ոգնականներից, Պաշավիաքիմի հանրապետական, յերկրամասային, մարզային, քաղաքային, շրջանա-



յին խորհրդի Մարտական պատրաստության բաժնի պետն անպայմանորեն նշանակում է մի ընդհանուր պատասխանատու որապահ՝ հրաձգային սպորտի հաստիքային հրահանգիչների և հրամկազմի թվից, կրտսեր լեյտենանտից սկսած և ավելի բարձր, վորոնց յենթարկվում են հրաձգությունների ղեկավարների բոլոր ոգնականները, կամ սահմանվում է պոլիգոնի, հրաձգարանի հաստիքային ապարատի պարտադիր որապահություն, յեթե այդպիսին գոյություն ունի։

Տիրերում և հրաձգարաններում հրաձգությունների անցկացումը կանոնավորելու և դրանց անվտանգությունը պահպանելու պատասխանատու որապահները և խմբակների, դպրոցների ընտրված ոգնականները խնամքով հրահանգավորվում են և ստուգվում է, թե նրանք ինչպես են իմանում հրահանգը (առաջինները հրահանգավորվում են Մարտական պատրաստության բաժինների պետերի, իսկ յերկրորդները՝ հրաձգություններն անցկացնող ղեկավարների կողմից)։ Յեվ միմիայն համոզվելուց հետո, վոր նրանք հաստատապես իմանում են իրենց պարտականությունները, նրանց թույլ են տալիս որապահություն կատարելու։

2. Մարտական փամփուշտներով հրաձգություններն անցկացնելը թույլ է տրվում միմիայն I և II կատեգորիայի հրահանգիչներին և պահեստի հրամանատարներին, կրտսեր լեյտենանտից սկսած և ավելի բարձր, իսկ հրաձիգների պատրաստումը փոքրակալիբր հրացանով անց են կացնում սկզբնական պատրաստության այն հրահանգիչները, վորոնք համապատասխան վկայականներ ունեն։

3. Կարգը հրաձգարաններում կանոնավորվում է հետևյալ ազդանշաններով։

ա) հերթական հերթափոխերի պատրաստումը և նրանց մոտեցումը կրակի գծի կրակային բնագծին կատարվում է «ուշադրություն» ազդանշանով.

բ) կրակ բանալը՝ «կրակ» ազդանշանով.

գ) կրակը դադարեցնելը՝ «ավարտ» ազդանշանով։

4. Տիրի և հրաձգարանների որապահները, վորոնք նշանակվում են հրաձգությունների ղեկավարի կողմից իրեն ոգնելու, կարգը և անվտանգության միջոցները պահպանելու գործում, չպետք է խառնվեն պարապմունքներն անցկացնելու կազմակերպմանը և մեթոդիկային։

5. Թիրախների դասավորումը, ծածկարանների հետ կապի կազմակերպումը, դիպումները ցույց տվողների ուղարկումը, պահպանության դասավորումը պետք է ավարտված լինեն առնվազն հրաձգության սկզբից 15 րոպե առաջ։

«Կրակը» բաց է արվում միայն այն ժամանակ, յերբ շղթայապատման պետը զեկուցում է հրաձգության որապահին հրաձգարանի պատրաստ լինելու մասին։

6. Հրաձգարանի, տիրի կրակային բնագծի վրա պարապմունքների ժամանակ պետք է գտնվի միմիայն կրակող հերթափոխը, իսկ բոլոր մնացածները գտնվում են կրակային բնագծի թիկունքում և մոտենում են միմիայն հրաձգության ղեկավարի կանչելուց հետո։

7. Հրաձգարանի տեղամասի սահմանները պարտադիր կարգով պետք է նշանակված լինեն պարզ տեսանելի պահպանական նշաններով, սյուներով

աշտարակներով, նշանաձողերով, որոնց վրա հրաձգության ժամանակ պետք է փոքրիկ տախտակներ կախել նախազգուշացնող մակագրերով «Մի գնա— կրակում են»:

8. Հրաձգարանի սահմանների այն կետերում, որոնցով անցնում են ռազմական շարժման (անիվային, հետիոտն) ուղիները, հրաձգության ժա- մանակ պետք է պահապան պոստեր դնել կուրսանտներից կարմիր դրոշակ- ներով: Պահապան պոստերի տեղերը հերթական համարներ ունեն (պոստ № 00): Ամբողջ հրաձգարանի համար անհրաժեշտ է կազմել սխեմա՝ պահապան պոս- տերի պլանի հետ միասին, որը հաստատում է Մարտական պատրաստու- թյան բաժնի պետը:

Կրակի ուղղագիծը (դիրեկտրիսա) և կողքի ուղղությունները պետք է պարզորեն նշանակված լինեն ցուցիչներով և տեղական առարկաներով: Այդ ուղղություններից դուրս հրաձգությունն արգելվում է:

9. Պաջավիաքիմի կազմակերպությունները, որոնք անց են կացնում մարտական հրաձգությունները, պարտավոր են վաղորոք տեղեկացնել շրջա- կա բնակչությանը՝ իշխանության տեղական օրգանների միջոցով, հրաձգու- թյան սկզբի և վերջանալու ժամանակի մասին:

10. Հրաձգության սկզբից առաջ, պահապան պոստերը դասավորելուց հետո, պետք է հրաձգարանի ամբողջ դաշտը զննել, շրջագայելով այն:

11. Վայրը հրաձգարանի համար օգտագործելու նպատակով անհրա- ժեշտ է հաշվի առնել հետևյալը.

ա) բնակավայրերը, բանուկ, հետիոտն ճանապարհները, արոտատեղերը և այլն պետք է գտնվեն հրաձգության միջնագծի ուղղությամբ կրակային բնագծից 7—8 կմ-ից ոչ պակաս հեռավորությամբ և կողքի ուղղությամբ յերկու կողմերի կողքային պահապան պոստերից 2 կմ-ից ոչ պակաս հեռա- վորությամբ.

բ) ցանկալի յե հրաձգարանի համար օգտագործել այնպիսի վայր, որտեղ կան լեռներ, բլուրներ և այլն, որոնք գնդակների բնական արգելակ- ներ են հանդիսանում, այն հաշվով, որպեսզի կրակի դիրեկտրիսան ուղղ- ված լինի դեպի այդ լեռները, բլուրները:

Այնտեղ, որտեղ հրաձգարանը չի ապահովում վերոհիշյալ պահանջ- ները, անհրաժեշտ է ունենալ առաջը կտրող հողաթումբ 6—7 մետր բարձրու- թյամբ և կրակի գծի յերկարությամբ:

12. Հրաձգարանի տերիտորիայի և նրան շրջապատող վայրի լիակատար շրջադիտում կատարելու նպատակով անհրաժեշտ է աշտարակներ ունենալ, որոնց վրա դիտողներ պիտի դնել:

13. Հրաձգարանի աշխատանքի վերահսկողության նպատակով հրա- ձգությունններն անցկացնող պատասխանատու որպանները կամ ղեկավարնե- րը պարտավոր են պահել պոլիգոնային մատյան № 4 ձևի համաձայն (ԲԳԿԲ կրակային պատրաստության կուրս), որը պահվում է պոլիգոնի պետի կամ Մարտական պատրաստության բաժնի պետի մոտ: Բացի այդ, հրաձգային պա- րապմունքներն անցկացնող որպանները կամ ղեկավարները պարապմունք- ները վերջացնելուց հետո գրավոր զեկուցում են ուղարկում Մարտական պատրաստության բաժնի պետին հրաձգարանում, տիրում տեղի ունեցած բո- լոր պատահարների մասին.



ա) հրաձգությունից առաջ զննել զենքը և սահմանել նրա լիակատար սարքինությունը, որը բացառում է դժբախտ դեպքերի հնարավորությունը հրաձգություն կատարելու ժամանակ.

բ) յուրաքանչյուր հերթափոխի հրաձգությունը վերջացնելուց հետո պարապմունքներն անցկացնող հրահանգիչը պարտավոր է զննել զենքը՝ նրա լցրած թողնելուց խուսափելու համար և վերցնել հրաձիգների մոտ մնացած փամփուշտները.

գ) արգելել կրակողներին զենքն ուղղել մարդկանց, կենդանիների վրա, դեպի աջ ու ձախ կողմերը, դեպի թիկունք, անկախ այն բանից, զենքը լցրած է, թե ոչ.

դ) ինչպես մարտական, այնպես էլ փոքրակալիբր զենքը լցնել հրա- ձգության ժամանակ թույլատրվում է միմիայն «կրակ» ազդանշանից հետո և հրահանգչի կարգադրությամբ (հրամանով).

ե) յեթե անհրաժեշտ է հրաձգության ժամանակ զենքը դնել գետնի վրա կամ տալ այն մի ուրիշ հրաձգի, պետք է անպայման զենքը նախապես դատարկել և փականակը բանալ.

զ) հրաձգության ժամանակամիջոցում պարտավոր է նշանակել փամփըշ- տակայանի պետ, որի միջոցով կատարել փամփուշտների բացթողումը, կրակած պարկուճների ընդունումը և ծախսման հաշվառումը, գրանցելով տեղեկագրի մեջ.

է) չթույլատրել առանց թույլտվության վերցնել կամ ձեռք տալ զեն- քին, որը գտնվում է կրակային բնագծի վրա, և թույլ չտալ, որպեսզի հրաձգությամբ չզբաղված հրաձիգները զենքը տեղից տեղ տանեն հրաձգա- րանում, տիրում: Հրաձգարան գալուն պես բոլոր հրաձիգների զենքը պետք է բուրգի մեջ դրած լինի և գտնվի փամփշտակայանի պետի հսկողության տակ.

ը) հետևել, որպեսզի բլինդաժներից (ծածկարաններից հրաձգություն- ների հետևանքները ցույց տալու համար) ցույց տվողների դուրս գալուց ա- ռաջ բոլոր հրացանների փականակները հրաձգարանի, տիրի կրակային բնա- գծի վրա բաց արած լինեն, հաստոցավոր գնդացիրների կափարիչները բարձ- րացրած, փականները յետ ծալած՝ ծածրակալի վրա լինեն, ձեռքի գնդացիր- ների պահեստարանը հանած, փականակը աջինի ծայրային դրությամբ.

թ) հրաձգության ժամանակամիջոցում տիրում, հրաձգարանում պետք է ունենալ յերթային դեղարկղ, որի մեջ պետք է լինեն նաև ախտահանող նյութեր հակագազերը հրաձգությունից առաջ ախտահանելու համար.

ժ) կրակողներին հերթափոխերի բաժանել և պարապմունք կազմակեր- պել հրաձգությունից ազատ առանձին հրաձիգների հետ.

ժա) հետևել հերթափոխի հրաձգությանը և ծախսված հրապաշարների հաշվետվության ճիշտ կատարմանը. յուրաքանչյուր հերթափոխի հրաձգու- թյան վերջանալուց հետո կազմակերպել զենքի զննումը, չծախսված հրա- պաշարների, կրակած պարկուճների հանձնումը, նույնպես և հրացանների մաքրումը.

ժբ) նշանակել և վաղորոք ուղարկել հրաձգարանի, տիրի որպանի տրամադրության տակ անհրաժեշտ քանակությամբ ցույց տվողներ, դիտող- ներ և պահպանություն.

ժգ) ստուգել ցույց տվողներին և պահպանությունը, թե ինչպես են նրանք իմանում իրենց պարտականությունները։

14. Հրաձգարանի որպահի պարտականությունները.

ա) հրաձգարանի յուրաքանչյուր որպահ պարտավոր է ներկա լինել հրաձգության ժամանակ, առանց հեռանալու սկզբից մինչև վերջը, գալով հրաձգարան, տիր այն հաշվով, վորպեսզի ժամանակ ունենա անել բոլոր անհրաժեշտ կարգադրությունները՝ ճիշտ նշանակված ժամին հրաձգությունն սկսելու համար.

բ) շղթայապատումը դասավորելուց և հրաձգարանը, բլինդաժի, ծածկարանի պատրաստականությունը գննելուց հետո բարձրացնում է հրաձգարանի կարմիր դրոշակը և թույլ է տալիս կրակ բանալ.

գ) հետևում է հրաձգարանում, տիրում կարգ պահպանելուն, վորն ապահովում է անվտանգությունը հրաձգության ժամանակ.

դ) կանոնավորում է բլինդաժից ցույց տվողներին դուրս բերելն այնպես, վոր վերացված լինի դժբախտ դեպքերի ամեն մի հնարավորություն.

ե) անձամբ և հատկապես նշանակված դիտողների միջոցով հետևում է, վորպեսզի գնդակոծման շրջանում շղթայապատման միջով պատահաբար թափանցած մարդիկ չլինեն. դրանց հայտաբերելուն պես կրակը դադարեցնում է, սպիտակ դրոշակ է բարձրացնում և միջոցներ է ձեռք առնում կարգը վերականգնելու համար.

զ) կատարում է պահպանության փոխարինումը և հանում է պոստից հրաձգության վերջանալուց հետո.

է) հրաձգարանի որպահը յուրաքանչյուր ծածկարանում պետք է ծածկարանի ավագ նշանակի, վորին յենթարկվում են բոլոր ցույց տվողները.

ը) հրահանգավորում է ցույց տվողներին, պահպանությանը և նրանց ստուգում է, թե ինչպես են նրանք իմանում իրենց պարտականությունները։

15. Ցույց տվողների պարտականությունները.

ա) հրաձգության ժամանակ ցույց տվողները գտնվում են նրանց համար հրաձգարանում հատկապես կառուցված ծածկարաններում հրաձգության որպահի կամ ղեկավարի ցուցումով.

բ) յերևացող թիրախները ցույց տալ անմիջապես և ավագ ցույց տվողի կամ հրաձգության ղեկավարի կողմից նրանց մատնանշված ճիշտ ժամանակի ընթացքում.

գ) շարժվող թիրախները տեղաշարժել այն արագությամբ, վորը մատնանշված կլինի ծածկարանի ավագի կողմից.

դ) զեկուցել ավագին դիպումների քանակի մասին և նրա թույլտվությամբ ծածկել ծակատները.

ե) առանց ծածկարանի ավագի թույլտվության վոչ մի դեպքում դուրս չգալ բլինդաժից (ծածկարանից), բոլոր դեպքերում առանց առարկելու կատարել ավագի ցուցումները։

16. Հրաձգարաններում և տիրերում մարտական և փոքրակալիբր փամփուշտները բաց թողնելու կանոնները.



ա) փամփուշտները պահեստից ստանալը և հրաձգարան, տիր տեղափոխելն անմիջորեն կատարում է կրակող խմբակի, դպրոցի հրամանատարհրահանգիչը.

բ) փամփուշտները կրակողների ձեռքը տալը կատարվում է հրաձգարանի (տիրի) կրակի գծի վրա փամփշտակայանի պետի կողմից, վորին նշանակում է ղեկավարը խմբակի լավ գրագետ անդամներից, դպրոցների կուրսանտներից.

գ) 7,62 մմ և փոքրակալիբր փամփուշտների բաժանումը հրաձգարաններում, տիրերում կատարվում է խստորեն ստորագրություն վերցնելով յուրաքանչյուր կրակողից սահմանված տեղեկագրի մեջ.

դ) փամփշտակայանի պետը փամփուշտները բաց է թողնում միմիայն հրահանգիչ-ղեկավարի ցուցումից հետո.

ե) հրաձգությունների ժամանակ փամփուշտների և կրակած պարկուճների վոչ մի կորուստ թույլ չի տրվում.

զ) պարկուճները հավաքում է կրակողն ինքը և դրանց հանձնումը փամփշտակայանին կատարվում է միայն այն ժամանակ, յերբ հրահանգիչը հրաման է տալիս՝ «հավաքել պարկուճները, հանձնել փամփշտակայանին».

է) մարտական փոքրակալիբր փամփուշտների պարկուճների պակասելու դեպքում՝ փամփշտակայանի պետը դրա, վորպես արտակարգ դեպքի մասին, անմիջապես զեկուցում է հրաձգության ղեկավարին.

ը) հրաձգության ղեկավարը հենց այստեղ էլ հրաձգարանում միջոցներ է ձեռք առնում պակասող փամփուշտներն ու պարկուճները գտնելու համար.

թ) հրաձգության ղեկավարը հրաձգությունը վերջացնելուց հետո ընդունում է փամփուշտների և կրակած պարկուճների մնացորդը փամփշտակայանի պետից և փոխադրում է պահեստ։

17. Տվյալ հրահանգի կատարումը պարտադիր է Պաշավիաքիմի բոլոր այն կազմակերպությունների համար, վորոնք անց են կացնում զանազան կլասիֆիկացիաների հրաձիգների պատրաստումը, նույնպես և պետք է ուսումնասիրված լինի, գործնական հրաձգությունների սկսելուց առաջ, խմբակի յուրաքանչյուր անդամի, դպրոցի կուրսանտի կողմից, անշեղորեն կատարելով պարապմունքների ժամանակ, և պետք է կախած լինի աչքի ընկնող տեղում։

## 3. Հրաձգի յեվ հրահանգչի միասնական հաշվառական քարտ

№________

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հրահանգիչ ________________ | | | | Կրծքանշան № . . . |
| I կատեգորիա | վկ. № . . . . . | | ՎՀ 1-ին աստիճանի | կրծքանշան № . . . |
| II | » | վկ. № . . . . . | ՎՀ 2-րդ աստիճանի | կրծքանշան № . . . |
| III | » | վկ. № . . . . . | Վարպետ | կրծքանշան № . . . |
| IV | » | վկ. № . . . . | Սնայպեր | կրծքանշան № . . . |

1. Ազգանուն, անուն և հայրանուն . . . . . . . . . . . . . . . . . (ընթ)

2. Ծննդյան տարեթիվը . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

3. Ծննդավայրը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

4. Սոցիալական ծագումը . . . . . . . . . . . . . . . . . . . .

5. Սոցիալական դրությունը . . . . . . . . . . . . . . . . . . .

6. Անձագրի համարը և ում է տվել . . . . . . . . . . . . . . . .

7. Կուսակցականություն . . . . . . . . . . . . տոմս № . . . . . . . .

8. Պաշտպանական շարքերը մտնելու տարեթիվը . . . . . տոմս № . . . . .

9. Պրոֆմիության անդամ . . . . . . . . . . . . . . . . . . . . .

10. Անունությունը ԲԳԿԲ ծառայության նկատմամբ . . . . . . . . . .

11. Ազգություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

12. Հրաձգային կլասիֆիկացիան . . . . . . . . . . . . . . . . . .

13. Ինչ հրաձգային կուրսեր կամ դպրոց է ավարտել և յերբ . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

14. Վոր թվականից եք պարապում հրաձգային սպորտով . . . . . . . .

15. Աշխատանքի տեղը և պաշտոնը . . . . . . . . . . . . . . . . .

16. Տան հասցեն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

«———»——————194—թ. Ստորագրություն . . . . . . .

| Ընդունված է հաշվառման | Հանված է հաշվառումից |
| --- | --- |
| | |



Դասընթացներ, կուրսեր, հավաքներ, հրամանատարական ուսուցում, խմբակներ անցնելը, կլասիֆիկացիոն նորմաների հանձնումն ու վերահանձնումը յեվ հրաձգային մրցակցություններին մասնակցելը

| Տարեթիվ, ամսաթիվ | Ուսուցման անունը և ժամերի քանակը | Տրված կոչումը, գնահատականը և աչկոնների քանակն ըստ վարժությունների | Ստորագրություն և կնիք |
| --- | --- | --- | --- |
| | | | |

## 4. ԹԻՐԱԽՆԵՐ

**Սպորտ-հրաձգային աշխատանքի յեվ մրցակցություն-ների համար, դրանց համար սահմանված համարա-կալումով ու չափերով**

*ԲՈԼՈՐ ՖԻԳՈՒՐԱՎՈՐ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՈՒՄ ԵՆ ՈՒՐՎԱՆԿԱՐՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆԵՐԿՎԱԾ ԵՆ ԿԱՆԱՉ ԳՈՒՅՆՈՎ, ԲԱՑԻ № 10 և № 30 ԹԻՐԱԽՆԵՐԻՑ*

*ՍՐԱՆԻՑ ԱՌԱՋ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԲՈԼՈՐ ԹԻՐԱԽՆԵ-ՐԸ, ՎՈՐՈՆՔ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՆ ԳՈՒՅՆԵՐՈՎ, ԿԱ-ՐԵԼԻ ՅԵ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ, ՅԵԹԵ ԴՐԱՆՑ ՉԱՓԵՐԸ ՀԱ-ՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԱՅՍՏԵՂ ԲԵՐՎԱԾ ՆՄՈՒՇ-ՆԵՐԻՆ*


140 мм
40 мм
60 мм
140 мм

№ 1


200 мм
30 мм
90 мм
135 мм
200 мм




60 мм
100 мм

№ 3


20 мм
50 мм

№ 4


25 мм
50 мм

№ 5



№ 6



№ 7





№ 8



№ 9



№ 9а


0,75

№ 10


23
18
12,5
35,5
45,5
44
31,5
37,5
14,5
14
37
59
8
21,25
99
110
183

№ 10а


14
15
17
18
27
66
10
28
53
20
170
18
10
36
7
8
9
10
6
5
4
3
2

№ 10б




№ 11—գլխաչափ




№ 11а—գլխի պրոֆիլը




№ 12—կրծքաչափ




№ 11б—դիտողի գլխի վերին մասը




№ 11в—դիտողի գլխի վերին մասը




№ 12а—կրծքաչափ (պրոֆիլ)



№ 13—գոտկաչափ



№ 13a—գոտկաչափ (պրոֆիլ)





№ 14—վազեվազք



№ 14a—վազեվազք (պրոֆիլ)



№ 15—փամփշտակիր



№ 16—հասակաչափ




№ 16a—հասակաչափ
(պրոֆիլ)




№ 17—Ձիավոր՝ շարժման ժամանակ




№ 18—Ձեռքի գնդացիր շարժման ժամանակ






№ 19—Ձեռքի գնդացիր




№ 20—դիտող




№ 20a—դիտող (պրոֆիլ)




№ 21—Հաստոցավոր գնդացիր




№ 22—Հակատանկային հրանոթ
շարժման ժամանակ




№ 23—Հակատանկային հրանոթ




№ 23а—հակատանկային հրանոթ




№ 23б—հակատանկային հրանոթ և լրացուցիչ կերպով յերեք ֆիգուր՝ 2,5 մ ճակատով և 3 մ խորությամբ




№ 24—դիտող՝ հեռաչափով




№ 24а—դիտող՝ հեռաչափով (պրոֆիլ)




№ 25—միջակ տանկ




№ 25а—թեթև տանկ




№ 26—զրահավտոմոբիլ




№ 26а—զրահավտոմոբիլ




№ 27—բեռնատար ավտոմոբիլ




№ 27а—բեռնատար ավտոմոբիլ




№ 28—մոտոցիկլետ




№ 29—հետևակային պերիսկոպ




№ 29а—կրակային կետի պերիսկոպ




№ 29б—տանկի պերիսկոպ






№ 30—շուն՝ շարժման ժամանակ



№ 30а—հրաձգության համար 2 և 3 ֆիգուրները կտրում և դնում են А և Б կտրուճների մեջ



№ 31




№ 31а—կրակային կետի հրակնատի հատակագիծը



№ 32—ինքնաթիռ, վորը քիթնիվար թռչում է դեպի գնդացիրը



№ 33—ինքնաթիռ, վորն անցնում է ճակատի ուղղությամբ 25—50 մ վրա հրաձգության համար




№ 34—ինքնաթիռ, որը քիթ-նիվար թռչում է դեպի հարևան զորամասը




№ 35—պարաշյուտիստի մակետ




№ 36—ստերեոդիտակ, ամրացումը գտնվում է հողաթմբի յետևում կամ թաղվում է գետնի մեջ



### 5. Շրջանակային հաստարանի շարժման արագության աղյուսակ

| Մինչև ինքնաթիռը չափված իրական հեռավորությունը | Ինքնաթիռի արագությունը մ/վայրկյաններով | Անկյունային մեծությունը հազարերորդականներով, որն անցնում է ինքնաթիռը 1 վայրկ. | Շրջանակային հաստարանի շարժման պահանջվող արագությունը մ/վայրկյաններով, եթե հեռավորությունը հրաձիգից | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 50 մ | 40 մ | 30 մ | 25 մ | 20 մ | 15 մ |
| 500 | 50 | 100 | 5 | 4 | 3 | 2,5 | 2 | 1,5 |
| 400 | 50 | 125 | 6 | 5 | 4 | 3 | 2,5 | 2 |
| 300 | 50 | 160 | 8 | 6,5 | 5 | 4 | 3 | 2,5 |
| 200 | 50 | 250 | 12 | 10 | 7,5 | 6 | 5 | 3,5 |
| 500 | 40 | 80 | 4 | 3 | 2,5 | 2 | 1,5 | 1 |
| 400 | 40 | 100 | 5 | 4 | 3 | 2,5 | 2 | 1,5 |
| 300 | 40 | 130 | 6,5 | 5 | 4 | 3 | 2,5 | 2 |
| 200 | 40 | 200 | 10 | 8 | 6 | 5 | 4 | 3 |
| Շրջանի չափերը, որի մեջ պետք է դիպցնել համապատասխան հեռավորության ժամանակ . . . . . . | | | 25 սմ | 20 սմ | 15 սմ | 13 սմ | 10 սմ | 8 սմ |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Հատված I

**Հրացաններով, ատրճանակով (պիստոլետով) յեվ գնդացիրներով հրաձգության համար խրախուսական կլասիֆիկացիոն նորմաներ**

եջ


Ներածական դիտողություններ . . . . . . . . . . . . . . . . . 3
1. Վորոշիլովյան պատանի հրաձիգ . . . . . . . . . . . . . . 5
2. Վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգ . . . . . . . . . . . 6
3. I դասի հրաձիգ . . . . . . . . . . . . . . . . . . . . 7
4. Հրաձիգ՝ ատրճանակով կամ պիստոլետով . . . . . . . . . . 8
5. Վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգ . . . . . . . . . . 9
6. Վորոշիլովյան գնդացրորդ . . . . . . . . . . . . . . . 10
7. Սնայպեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 12
8. Հրաձիգ-վարպետ . . . . . . . . . . . . . . . . . . . . 12


### Հատված II

**Ծրագիր Վ.Պ.Հ., Վ.Հ., 1-ին աստիճանի Վ.Հ., 2-րդ աստիճանի Վ.Գ. (հաստոցավոր գնդացրի), Վ.Գ. (ձեռքի գնդացրի), ատրճանակով (պիստոլետով) հրաձգի պատրաստման**


Ներածական դիտողություններ . . . . . . . . . . . . . . . . . 14
1. Ծրագիր վորոշիլովյան պատանի հրաձգի պատրաստման . . . . . . . 17
2. Ծրագիր վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձգի պատրաստման . . . 19
3. Ծրագիր վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձգի պատրաստման . . . 23
4. Ծրագիր վորոշիլովյան գնդացրորդի (ДП-Դեգտյարևի հետևակային գնդացրով) պատրաստման . . . . . . . . . . . . . . . . 28
5. Ծրագիր վորոշիլովյան գնդացրորդի (հաստոցավոր գնդացիր) պատրաստման . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 33
6. Ծրագիր ատրճանակով կամ պիստոլետով հրաձգի պատրաստման . . . 38




### Հավելվածներ


1. Հրահանգ՝ նորմաները հանձնելու ժամանակ ստուգումները և կոնտրոլ հրաձգությունները անցկացնելու համար . . . . . . . . . . . . 41
2. Հրահանգ՝ տիրերում և հրաձգարաններում հրաձգությունները անցկացնելու կարգի մասին . . . . . . . . . . . . . . . . . 44
3. Հրաձգի և հրահանգչի միասնական հաշվառական քարտ . . . . . . . 49
4. Թիրախներ սպորտ-հրաձգային աշխատանքի և մրցակցությունների համար, դրանց համար սահմանված համարակալումով և չափերով . . . 53
5. Շրջանակային հաստարանի շարժման արագության աղյուսակ՝ . . . . 71

Թարգմ.՝ Պ. Պ. Աթայան
Պատ. խմբագիր՝ Վ. Գրիգորյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Օհանյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Շ. Դալաքաշ

Գլավլիտի լիազոր՝ Բ—1045 Հրատ. 5170.
Պատվեր 59. Տիրաժ 4000.
Թուղթ 62×94 Տպագր. 4½ մամ.
Մեկ մամ. 38400 նշան.
Հանձնված է արտադրության 13 հունվարի 1940 թ.
Ստորագրված է տպագրության համար 10 փետրվարի 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Երևան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0276630

Գինը 90 կոպ.

13124

ПРОГРАММЫ
и классификационные нормы по стрелковому спорту
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.